

Ա Ի Օ Ե

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԷՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԿԱՆ, ԳԻՆԳԻՏԿԱՆ
ԵՒ ՔԸԳԸՔԸԿԱՆ


ԻՆՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՑ

1874



ԵՆԵՐԹԻ ՏԱՐԻ
ԹԻՎ 4

ԱՄՍԱԳԻՐ

ԱՊՐԷՆ 30
1874

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆՍԱՅԻՐԱԿԱՆ ԵՒ ԴԲԱՅԻՏԱԿԱՆ

ԱՄԵՆ ՅԱՆՅԱՆԻ ԻՐ ՀԱՏՈՒՅՈՒՄՆ ՈՒՆԻ

ԱԶԳԱՅ քարոյսական ուղղութիւնը
և յառաջագիծութիւնը նոցա գլխա-
ւորաց, իշխանաց, գաղտնարարաց և
ինչ և ինչ կերպիւ ազդեցութիւն ու-
նեցող անձանց ուղիղ քարոյսականէն
կախումն ունի։ Ազգ մի կամ ժողո-
վաւոր մի բնաւորեալ է նոցել իրմէ
վեր եղողներուն վարուց, բնթացից,
սովորութեանց և գործոց վերայ, եւ
ըստ կարի կը ջանայ անոնց նմանիլ,
նոյն իսկ զանոնք բանբոսած և անոնց
գործքերը գատած ատենն անդադամ։
Ուրեմն ազգի կամ ժողովրդեան նա-
խագահը, իշխանը, տեսաւ չը, առաջ-
նորդը, գաղտնարարը, խմբադիրը և
այլն, և թէ ճշմարտութեամբ կուզեն որ
իրենց հպատակները կամ իրենց յայտնիքը

բարեբարաց, խաղաղ և տաքիւնի լի
նին պէտք է նախ նոքա այնպիսիներ
լինին, որ ժողովուրդը կարողանայ ա-
նոնցմէ ուղղութեան օրինակ ու իրաւա-
առնուլ։ Նմանապէս իւր բարիքը
ճանցող ժողովուրդը թէ պարտաւոր
է և թէ իրաւունք սենի ընտրել իրեն
համար այնպիսի անձինք, որք կարողա-
նան զինքը յազդութիւն և յառաքի-
նութիւն առաջնորդել, իսկ այս հան-
գամանքը չունեցողները մերմել իս-
պառ իւր գործոց մասնակցութեանէ։

Թշուառ է այն ազգը որուն գործ-
քերը անփորձ ու բոքոտ մանուկնե-
րու, թեթեւամիտ ու յանձնապա-
տան երիտասարդներու և անմիտ ու
մոլի ձերբիւռ ձեւքն անցած է անանկ

աղբը չէ կարող ազնուական բարք ,
խաղաղ կեանք և ճշմարիտ յառաջա-
դիմութիւն ունենալ : Ամօթ ու նա-
խատինք է առաջնորդի մը որոյ ժողո-
վուրդը զեղծ ու ապականեալ վարուց
մէջ է . նոյնպէս բիւր նախատինք և
անարգանք է այն ժողովուրդեան որ ա-
նարժան առաջնորդաց ձեռքք կը կա-
ռավարուի : Հետեւաբար հարկ ան-
հրաժեշտ է որ բանական էակի ուղ-
ղութեան գործն ըստանձնողը պէտք
է նորա օգուտը պահանջածին համե-
մատ գործէ և ՚ի ճշմարիտ մարդկու-
թիւն առաջնորդէ զայն . իսկ եթէ
անձեռնհաս է , թողու ինքնին և հը-
րաժարի . կամ թէ ժողովուրդը տեա-
նելով որ իւր բարոյականի գործն կա-
տարելու յանձն առնողը անյարմար է
և վնասակար , պէտք է իւր օգուտը
ինքն խորհելով մերժէ զայն . և ձեռն-
հաս իշխանութիւնը նորա վերայ հըս-
կելով կամ ուղղէ և կամ խալաւ գոր-
ծէ դադրեցնէ :

Մէք քանիցս առիթ ունեցած եմք
ասել թէ Աղբին յայտնի վնասակար
անձինքը պէտք են պաշտօնէ անկա-
նիլ եւ ըստ արգարութեան օրինաց
պատժուիլ . իսկ գաղանիները Աղբը
պէտք է խուզարկել , գտնել , երեւան
հանել եւ դատաւարաւ « Բառնալ
դարն ՚ի միջոյ որպէս զի խաղաղու-
թիւն լինի . Հեթանոս ու մաքսաւոր
համարել » այն ամենը որ իրենց աղ-
գամիտս գործոց մէջ անդէղջ յամա-
ռութեամբ կը յարատեւեն :

Այս անգամ եւս նոյնն է մեր կրօն-
նաժը . վասն զի ամեն օր կը տեսնեմք
որ Աղբը շարունակ կը գանգատի իւր
առաջնորդներէն . սակայն յանցաւոր
առաջնոր մի գիւ իւր արգար հատու-
ցումը չառաւ . տակաւին ոչ լուր
վարձք և ոչ վատը պատիժ ստացաւ .
այլ ընդհանրաւոր լու ու վատ մի և

նոյն վիճակի մէջ են : Տեղէ մը քաղա-
քականապէս և կրօնապէս ամբաստա-
նուած , գանուած ու հալածուած ա-
ռաջնորդը պաշտօնիւ ուրիշ տեղ կը
ղրկուի և անբասիր առաջնորդին հետ
հաւատար իրաւունք կը վայելէ . ՚ի
վարձ իւր ապերառութեանց : Քահա-
նայն իւր ժողովուրդէն կ'ամբաստան-
ուի . բայց յետոյ կամ սպառնալիքով
և կամ ուրիշ միջոցաւ . . . նոյն քա-
հանայն իւր պաշտօնը կը շարունակէ
հանդերձ իւր մղութեամբը , որով
ժողովուրդն ապականուելով անհոգու-
թեան թմրութեամբ անզգայացած կը
մնայ : Քաղմիցս Աղբը և նոյն իսկ Վար-
չութիւնն անգամ լրագրաց ոմանց
սուտ , խռովայող եւ անբարոյական
յոգուածոց դէմ դժգոհութիւն յայտ-
նած , բողբած և սպառնացած է .
բայց նոցա ուղղութեան համար բը-
նու վճռական միջոց մի չէ գործադը-
րած , որով նոքա գիւ կը շարունակեն
և աղքն անզգայապէս կը վնասուի :
Բաղմիցս Ուսուսչոյց և Գաստիարակաց
անկարգ ընթացքը դատուած է . բայց
նոյնք դարձեալ առանց իրիք փոփո-
խութեան տստ և անդ իրենց փափուկ
պաշտօնը կը շարունակեն եղձանելով
աղբին ապագայ սերունդը : Թողունք
այն մոլի գրագէտները , որք հազարիցս
անբաստանուած են եւ գիւ իրենց
թունալի գրուածները հրատարակելու
համար Աղբին կողմէն նպաստ և ըն-
դունելութիւն կը գտնեն : Այս ամենը
այսպէս լինելէն յետոյ բնական է որ
տակաւին և միշտ Աղբին անբարեկարգ
վիճակին վերայ դժգոհութիւններ լըս-
ուին :

Աղմուկի , խռովութեան , երկպա-
ռակութեան , զեղխութեան և ամե-
նակերպ անբարոյականութեան ապա-
կանորար և քարուքանդ ընող հեղեղը
աղբային գեղեցիկ անգաստանը կը ո-

զողէ և կը պարտատէ . իսկ այս ան-
դատանի պահապանը ու մշակը ինչ
կ'ընեն . — փոխանակ հեղեղին ընթացքը
փոխելու և անգատանը մարբելու ,
նորանոր խրամներ կը բանան , զայն
ծաւաղելու ճանապարհներ կը հորդեն
և ազգային պողոտաու ծաղկները ծա-
ռերն ու հռենդները կը մատնեն յաւեր
և յապականութիւն :

Մինչեւ ցարդ ազգին մէջ որ պաշ-
տօնեայ (կրօնական կամ աշխարհական)
քիչ կամ շատ , յիրաւի կամ յանիրաւի
չամբաստանուեցան , բայց որ մէկը ար-
դարութեամբ դատուեալ պարտաւոր
կամ անպարտ հրատարակուեցաւ հոն
դերձ իրենց յանցանքն ու արդարու-
թեամբը : Գատաւորէն արձակուած
վճիռները շատ անգամ տարտամ , եւ
բեմն անխմատ երբեմն պարտաւորն
արդար և արդարը պարտաւոր հոչա-
կել և երբեմն ալ բողբոջին ըութիւն
պահելն է . շատ անգամ ալ նոյն իսկ
պարտաւոր հրատարակածը ինքն իւր
ձեռք փերտին պաշտօնի կարգած է ,
որով անկարգութեանց պաշտօնապէս
բացարձակ ազատութիւն տուած է :
Հապա ուր թողուք այն կաշառները ,
այն ներբողները և այն բարի վիպու-
թիւնները որք շուրջուած են խառնա-
յոյններու , անպարկեշտներու և սու-
խա խաբէբաններու : Նմանապէս ինչ
ըսենք այն անստոյգ ամբաստանու-
թեանց համար որք զրպարտութեան
կերպարանք կ'առնուն երբ ճշմարտու-
թեամբ չեն ապացուցուիր :

Քանի որ կան ու դեռ եւս պիտի
մնան այս ամենը , Ազգը ոչ խաղաղե-
լիք և ոչ ալ յուզողութիւն և ի յա-
ռաջագիմութիւն գալիք ունի : Զուր
են ուրեմն գանգատները , անօգուա-
կեն բողբոջները և սուա ու խաբէու-
թիւն են այն ամեն առաջարկութիւնք
և ինդկիք որք Ազգին ուղղութեան

և բարեկարգութեան նպատակու եւ
բեմն ասուպի ոյէս կ'երեւին և կ'անե-
րեւութեան . վասն զի գործադրու-
թիւն և արդիւնք չունին : Անկողմա-
կալ , արգար և օգտակար որոշումները
պէտք է վճռակի գործադրութիւն ու-
նենան . ապա թէ ոչ ուրիշ բանի չեն
ծառայեր բայց և թէ խաբելու և
թմրեցնելու կամ գրգռելու և յուզե-
լու . հարկ չէ ըսել թէ որոշմանց ան-
գործութիւնը իշխանութեան ազդե-
ցութիւնն ալ կը կատրէ . անգործագը-
րելի որոշումը հրատարակելն անտե-
ղութիւններ շատ ունի զորս չեմք ու-
զեր մի առ մի թուել :

Եթէ յանցաւորը չը պիտի դատուի
և իւր պատիւը չը պիտի կրէ , ինչո՞ւ
կ'ամբաստանուի . մանաւանդ եթէ վե-
րապին յարգ ու պատիւն ալ պիտի
վայելէ՝ առանց իւր արատը սրելու ,
ուրեմն , ինչո՞ւ կը ներուի որ բա-
րոյսպէս սպաննուի իւր պատիւը եւ
առաւել եւս ըմբաստանայ ու լըբա-
նայ , ինչպէս եղան մինչ ցարդ յանա-
կրնկարս անուանին հրապարակի մէջ
խայտառակուող և ըստ օրինի չը դա-
տող անձինք : Մինչեւ ցարդ որ յան-
ցաւոր նախապէս առանձինն յուզողու-
թիւն հրաւիրուեցաւ պատուոյ պա-
հանջած ամեն հանգամանք և ապա
դատաւարտուելով մերժուեցաւ վա-
յելած ամեն իրաւունքէն կամ հասա-
րակայ գործառնութենէն : Ընդհա-
կառակն , յանցաւոր համարուածին
անունը յանկարծ հրապարակ կ'ընէ
կը նշաւակուի , և առանց արդարանա-
լու կամ դատուելու նորէն մեծամեծ
պաշտօններու կը կանչուի , որոց մէջ
ամբաստանուած էր : Պատուոյ , ար-
դարութեան կամ բարոյականի որ օ-
րէնք այդպիսի անհնթեթ և հակառա-
կան պատուէր կը տայ : Տնտես մի իւր
պաշտօնին անհատաւոր իմ ամբաստա-

ներէ և տաւնց հաշիւը տեսնելու նորէն իւր պաշտօնին մէջ թողուլը անոր անհաւատարմութեան դատ տալ է . . .

Այս անգամ Կ. Պօլսոյ Եկեղեցական Համագումար ժողովը Պատրիարքի ընտրութեան առ թիւ ընտրելոյց ցանկէն աւթն Եպիսկոպոս գուրս ձը գած է, զորս ինքն կրօնական ծախն անընդունելի համարած է : Լաւ, իրեն անընդունելի եղածը թող ամենուէն ալ անընդունելի լինի, ասկայն բանտկանութիւնը կը պահանջէ որ զԵկեղեցական Համագումար ժողովը համազօգ փառարն ինչ որ է նոյնը պէտք է ամեն սրգիւնսյ, որպէս զի ամեն միայր ալ տպաւոյցներու ճշմարտութեան համազուելով յաղթահարուի, խաղաղի և զանազան կարծեաց աւ ենթադրութեանց տեղի չը մնայ :

Մեր խաղերը որպէս զի ամենք այլ ընդ այլ չը մեկնեն, պարտք կը համարինք ասել որ մեք այդ Եպիսկոպոսներուն ընտւ մէկը ջատագովելու կամ պաշտպանելու միայր չաւինք առ այժմ. քանզի արդէն յանցանքին յայտնի չէ որ դատել կարողանամք. այլ մեք խնտահաբար պիտի հարցանեմք նախ, թէ—Արդեօք ինչպիսի յանցանք է այն որ Եպիսկոպոս մի կրնայ կրօնական մտախն անընդունելի կացուցանել աշխտահական պաշտօնի, և եթէ մէկը Պատրիարք լինելու համար կրօնական մտախն անընդունելի կը համարուի միթէ կրօնից սրբազան պաշտաման մէջ ընդունելի կը լինի, և ինչ օրէնքով :

Երկրորդ. կը համարձակինք ամենայն հեզութեամբ և պարտ ու պատշաճ ակնածանօք հարցանել, — Միթէ այդ Եպիսկոպոսները դպիր, տարիաւադ և վարդապետ եղած չեն, արդեօք ատոնց նախկին կեանքն ալ կրօնական մտախն անընդունելի էր. եթէ այնպէս էր, ինչու ուրեմն մինչեւ ե-

պիսկոպոսանարա ճանապարհը իրենց առջեւ բոց մնացած է, միթէ դոցա յանցանաց ծանրութիւնը Ազգին, զիրենք ընտրող ժողովրդեան, նամանաւանդ զիրենք ձեռնադրողին վերայ չանկանիր, անպատուութեան և դայթակղութեան պատճառ այս ամենը չեն համարուիր. իսկ եթէ ըսուի, որ մարդ կարող է մէկ փոքրիկին մէջ ի յաւուրութենէ ի յառութիւն և ի չարութենէ ի բարութիւն դառնալ. կ'ընդունինք այդ. բայց անկեղծութեամբ կը փութամք հարցանել, թէ—Գորա անմիջապէս Պատրիարքի ընտրութե միջոխն անընդունելի եղան, թէ յառաջ ժամանակաւ ալ անընդունելի էին. եթէ յառաջ ալ այնպէս էին ինչու մինչեւ ցարդ չը դատադարձուեցան և մնացին իրենց կրօնական պաշտաման մէջ ի գայթակղութիւն այլոց, և եթէ կրօնականի մը անընդունելի լինելը իւմանալու համար ազգը մինչեւ Պատրիարքի ընտրութեան սպասելու է . . .

—Երրորդ. Մեք կը փափաքինք գիտնալ թէ այդ Եպիսկոպոսաց կրօնական մտախն անընդունելի ընող յանցանքներն որնք են :

Գարձեալ կը կրկնեմք, որ մեք այս հարցումներն ընելով ընաւ նպատակ չաւինք դոցա արատաւորած պատիւը սրբել և սպանուած անունը կենդանացնել, (թէ և խիտա ցանկալի էր). այլ կ'ուզեմք ճշմարտութիւն մի լսել և Եկեղեցական Համագումար ժողովոյ Ս. Հարց Ազգին բարոյական ուղղութեան համար բրած այս ծանրաւշիւ ձեռնարկին ելքը տեսնել, որ արդիւնք ունենալու համար հաւանաւանաբար իրաւամբ և արդարութեամբ պէտք է լինի տաւնց իրիք նկատման :

ԻՆՁ ՊԻՏԻ ԼԻՆԵՐ ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎԻՃԱԿԸ ԵՔԷ ՔՐԻՍՏԻՆԵՆՈՒԹԻՒՆԸ ԶԵ

ԲԵՆԵՐ ԲՆԱԿ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՅ

(Հարուհի աղու թիւն և վերջ • տես թիւ 3 •)

Հաստատունք մեր վերջին եղբայրացաւ թիւններն այնպիսի մեծ վկայութիւններով որք բնու կատարածելի չը պիտի լինին փիլիսոփայութեան առջև :

Թերաւ փիլիսոփայութիւնն , ըստ Պագան , կը հեռացնէ ի կրօնից , և կատարեալն կը մօտեցնէ առ այն . ոչ որ կ'սրտնայ թէ կայ մի Մտուած բայց նա միայն , որ չուզէր թէ Մտուածոյ գոյութիւնը լինի աշխարհի վերայ :

Իստ Սօնդէսգիւի « Իսել թէ կրօնը հարկադրիչ պատճառ մը չէ , որովհետեւ միշտ Հարկադրեր , ըսել կըլլայ թէ քաղաքական օրէնքներն ևս առիպիչ պատճառ չեն . . . : Ինդիրը իմանալու վրայ չէ թէ լաւ ևս էր արդեօք որ մարդ մը կամ ժողովուրդ բընաւ չունենար կրօն , քան թէ ունենա՞ն չարաչար գործադրէր , այլ իմանալ թէ օրն նուազ չար է , երբեմն չարաչար ի գործ դնել կրօնն , թէ բընաւ կրօն չունենալ » :

« Օարմանալի է Սաարգօնի պատմութիւնն , կ'ասէ մեր ի փիլիսոփայութիւն կոչած անուանի անձն : Թէրէի աստուածն երեւեցաւ անոր երազին մէջ և հրամայեց բոլոր Ագիստականքուք մերն սպանանել . նա հասկացաւ իսկոյն որ աստուածներն անհաճոյ են իւր թագաւորութեանն , որովհետեւ նորա իրենց ամենօրեայ կամոց հակառակ բանիւր կը հրամայէին իրեն . ուստի ինքն հեռացաւ և Աթէօֆի գընաց » :

Վերջապէս , կը կանգնէ Ժ . Ժ . Բուսսօն . « Փախէք անոնցս , որք

բնութիւնն բացարեւելաւ պատրուակաւ , կը սերմանեն մարդկան սրտին մէջ ցաւաղին վայդապետութիւններ և իբր իրենց երևելի երկբայութեանց մասին հարիւրապատիկ աւելի յամառ են քան իրենց հակառակորդները : Են մեծամիտ պատճառանք , որով իրենք համոզուած , ճշմարտուած և համարձակութիւն ստացած են , կը հնազանդեցնեն նորա զմեզ բռնի իրենց հատու սրտնան , և կ'ամին ապ մեզ իբրեւ ճշմարիտ սկզբունք իրաց , անխմաց դրութիւններ , զորս ինքեանք հաստատած են ի մահ : Սակայն խորտակելով , եզծելով և սոնակիս առնելով այն ամեն բան , զոր մարդիկ կը յարգեն , նա և կը զօրեն տառապեալները իրենց յետին միտքարութեանն և զօրաւորներն ու մեծատունները իրենց կարեաց միակ կտակն . կը խլեն ի խորոց սրտից մեզոյ տապնապն , առաքինութեան յոյս . և կը պարծին տակաւին իբր բարերարք մարդկութեան : Արբէք , կ'ասեն նորա , ճշմարտութիւնը փնտաւար չէ մարդկան . ես եւս միահաւան եմ իրենց այս մասին . և այս , ըստ իմ կարծեաց , մեծ նշանակ ժ'է , որ իրենց ուսուցածն ճշմարտութիւնն չէ :

Փիլիսոփայութեան մէջ խնտոտակութեան ամենէն ընտել մի մասն է համեմատել լաւ փիլիսոփայութեամբ ժողովուրդ մը վատ բրիստոնեայ ժողովուրդի մը հետ , որպէս թէ դիւրագոյն է պատրաստել ճշմարիտ փիլիսոփայութեամբ ժողովուրդ մը , քան ճշմարիտ բրիստոնեայ ազգ մի : Չը գիտեմ թէ անհատից մէջ , դիւրագոյն է մէկն ձեռք բերել քան միւսը , այլ որովհետեւ ինդիրը ժողովուրդի վերայ է , կը հաստատուի թէ պէտք է գիտնալ որ , առանց կրօնի ժողովուրդ մի ի չարն գործ կը դնէ փիլի-

ստիպուած թիւեր, ինչպէս և քրիստոնէայք չորաչար կը գործադրեն կրօնն սուսնց փիլիսոփայութեան, և ահա այսու շատ կը փոխուի խնդրոյն կերպարանքը:

Սիւս կողմանէ խիստ գիւրին է հրատարակել գրեանց մէջ բարի օրի նախներ, բայց խնդիրը գիտնալ է թէ արդեօք այդ օրինակներն հաստատապէս կրօնից ուսմանէն յառաջ կը գան և անվրէպ անախ կը բղխին: այս է ահա որ ցարգ յերեւոն չեկաւ: Այլ մնայ տակաւին իմանալ թէ փիլիսոփայութիւնը ամենայն գիտութեամբ եւ ի վերայ գահու կարող է իշխել ի վերայ անհասկնալիութեան, անձնասիրութե, փառասիրութեան, մարդկան փոքրիկ կրից, և թէ նա կարող է կրթել մարդկութիւնը այնպիսի գիւրութեամբ, որով կը սթարծենայ նա գրիչ ի ձեռին:

«ԱՅՍ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐՈՎ՝ ՈՒՐԵՄՆ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆՆԸ ԶԷ ԿԱՐՈՂ, ԸՆԵԼ ԱՅՆ ՊԻՍԻԲԱՐԻԲ ՄԸ՝ ՈՐՈՒՆ ԼԱՒԱԳՈՅՆԸ ԶԿԱՐԵՆԱՅ ԸՆԵԼ ԿՐՕՆ՝ ԲԱՅՑ ԿՐԻՍՏՈՆԵՒՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԸՆԵԼ ԱՅՆՊԻՍԻԲԱՐԻԲՆԵՐ՝ ՈՐԲ ԱՆԿԱՐԵԼԻ ԿԸ ԼԻՆԻՆ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»:

Արդի կառավարութիւններն, առանց երկրայութեան, քրիստոնէութեան պարտական են իրենց տեւական իշխանութիւնն և յեղափոխութեան սակաւութիւնն: Վասն զի քրիստոնէութիւնը զիրենք նուազ աւրիւնարբու ըրաւ: այս լաւ եւս կը հաստատուի արդեամբ, եթէ բազմատենք ներկայ կառավարութիւններն նախկիններուն հետ: Արօնն, լաւ ևս ճանաչուելով, հարածեց մոլեգնութիւնը և աւելի քաղցրութիւն մը տրուաւ քրիստոնէայ բարուց: Այս փոփոխութիւնն գրականութեան արգիւնքն է, որովհետեւ ուր որ գրականութիւնն լուսաւորած է, մարդ-

կութիւնն տակաւին իւր յարգն բաւաքած չէ: Այնպէս, Արիստոտելաց, Հառվոյ կ'այսերաց և Չինաց անգլիականութիւններն կը հաստատեն զայս: Վթութիւնը Աւետարանի արդիւնքն է ո:

Սեզ գալով, մենք համոզուած եմք որ քրիստոնէութիւնը յաղթանակապիտի ելլայ այն փորձէն, որով ինքը պիտի զրտուի ու արբագործի: մենք աւելի այնու կը համոզուինք, որովհետեւ քրիստոնէութիւնը արդարութեան պաշտպան է, և որչափ քննեն զայն, այնչափ խորին կը գտնեն: Իւր խորհուրդները բնութիւնը կը բացատրեն, իւր գործերն իր ակզուները կը հաստատեն: Իւր յղորմածութիւնն հազարաւոր կերպերով յաջորդեց նախնեաց անագորութեան: նա ոչ ինչ չը կորցու նախկին փառաւորութենէն և իւր կրօնը առաւել եւս գոհացոյց միտքն ու սիրտը: անոր պարտական եմք ամենայն ինչ, գրականութիւնը, գիտութիւնները, մշակութիւնները և գեղարուեստներն: նա միացոյց բարոյական կրօնականին և մարդը Աստուծոյ հետ: {} Կուս «Քրիստոս» փրկիչ բարոյական մարդոյ, նայնպէս եւ փրկիչ է բնական մարդոյ: նա դիպեցաւ իբրի մի մեծ և երջանիկ դէպք, որպէս զի բարբարոսաց ծրհեղեղին և բարուց ընդհանուր ապականութեան առաջին առնու: Այնքան և իմ քրիստոնէութեան գերբնական ապացոյցներն, տակաւին պիտի մեան իւր բարոյականութեան բարձրութեան, իւր բարութեանց անչափութեան և իւր փառաց գեղեցիկութեան մէջ ապացոյցներ, որովք գոհացուցիչ կերպիւ կը հաստատուի որ նա ամենէն աւելի չքնաղ և աստուածային կրօն մ'է և ամենէն աւելի սուրբ, որոյ նմանը մարդիկ գործադրած չեն երբէք:

« Իսկ անոնց , որք կը գովամանկին կրօնի գէմ , կ'ըսէ Բողոքալ , պէտք է նախ ցուցանել որ նա արդարութեան հակառակ չէ . նա ճշմարիտ է և պէտք է յարգել զայն , ապա սիրելի առնել զայն և գոհութիւն մատուցանել նորա ճշմարիտ լինելուն համար . եւ ապա անհերքելի վկայութեամբ ցուցը նել անոր ճշմարտութիւնը , հնութիւնն ու սրբութիւնը իւր մեծութեամբ ըն ու բարձրութեամբ » :

Ըհա այսպէս ծրագրած է այն մեծ մարդը , որուն հետեւեցանք մենք մեր բանաստեղծութեան մէջ , մենք քրիստոնէութեան հակառակորդներուն յառաջ բերած հասարակ փաստերով չբխօսեցանք , եւ ահա վկայութեանց շարք մի եւս մի և նոյն եղրակացութիւնն պիտի հետեւեցնէ և վերջ պիտի տանք մեր բանաստեղծութեան :

Քրիստոնէութիւնը կատարեալ է , իսկ մարդիկ անկատար :

Ըրդ անկատար սկզբունքէ մը կարելի չէ կատարեալ հետեւութիւն հանել . ուրեմն և քրիստոնէութիւնը մարդիկներէ յառաջ եկած չէ :

Ըթէ նա ՚ի մարդկանէ չէ , ուրիշ տեղէ մը կարելի չէ լինել բաց եթէ յ'ստուծոյ , և եթէ յ'ստուծոյ է նա , ուրեմն մարդիկ զայն մի միայն աստուածային յայտնութեամբ կարողացան ճանաչել :

Ուրեմն քրիստոնէութիւնը յ'ստուծոյ յայտնեալ կրօն մ' է :

ՇԱԹՕՊՐԻԱՆ

Թարգմանեաց Դ. Գ. Ն.

Ղարեհէ Գ. Տ. Յ.

Իմայեցի :

Ա Ռ Ո Ղ , Զ Ա , Կ Ա Ն

(Շարունակութիւն , տես թիւ 3)

1. ԵՐԿԻՒՂ , ՅԱՍՏՈՒՆՈՅ . Մեղքէ , մղութենէ և չար սովորութենէ ետ կենալու և ազատ մնալու մէկ հատիկ առաջին ու գլխաւոր միջոցն է Աստուծոյ երկիւղը , չար գործողը ոչ երկիւղածութիւն ունի և ոչ Աստուածաբնութիւն : Աստուած է գերագոյն բարի , Հայր բարեգութ , նախախնամող և բարերար , որ միմիայն հաճութիւն ունի սիրոյ սրբութեան և բարութեան մէջ , ուստի կը կամի որ մեք ալ սիրով և յոժարութեամբ հետեւինք իրեն , ինչպէս որ նա զմեզ կը սիրէ , մեք ևս սիրեմք զինքը . և սիրել ուրիշ կերպով չը լինիր բայց եթէ երկիւղածութիւնը նորա կամաց հնազանդելով , վախնալ որ իրեն կենսատու օրինաց և ամենաբարի կամաց ներհակ չը գործեմք : Այսպիսի երկիւղածութեամբ մեք կը ճանաչեմք Աստուծոյ ամենագիտութիւնը , որ մեր սրտի գաղտնիքն ալ գիտէ , և կը զգամք նորա ամեն տեղ լինելը , որ ոչ խորշ մի և ոչ խաւարին խորամիտ մի նորա ներկայութենէն թափուր չէ , և ամենեւին գաղտնեաց և մթութեան մէջ գործուած ու մթ տածուած բան մի չը կայ , որ նորա ու մենատես աչքը զննած չը լինի , կը ճանչնամք որ նորա աչաց սրբութիւնը կ'ատէ մարդկան պիղծ գործքերը եւ կը զգուի անոնցմէ :

Արդ երկիւղած մարդը գիտնալով Աստուծոյ այս կատարելութիւնները ամօթխածութիւնը զինքը պարկեշտութիւն ու որբութեան լէջ կը կրթէ ոչ Աստուծոյ ներկայութենէն պատկառելու և ամօթահար լինելու խորհուրդ մի չունենայ և վատ գործ մի չընէ , այնպէս կը պարտաւորէ իւր անձը որ միշտ սրբա-

Երես, ուրոսի սրտով համարձակի Աստուծոյ ներկայանալ եւ առանց սարսափի եւ աւելոյ Նորա հայրական գիրկը դիմել: Վերջապէս Աստուծոյ երկիւղը կը հոսանաւորէ այն որդիական անկեղծ աշխատութիւնը, որ զաւակ մի իւր բարի եւ գթատ հայրը յարգելու համար բնականապէս կը զգայ Նորա բարութենէն եւ գթութենէն թելագորւած, եւ ամեն պարագայի մէջ իւր բոլոր շարժումն ու գործերը կ'ողջէ գէպ ի Հօրը կաթնոյ համաձայնելու: Զը խորհիր, չը խօսիր եւ չը գործեր այնպիսի բան, որ Հայրը զայն բացիէ եւ նորա դժգոհութեան առիթ տայ: Այս է յիշող հանգամանքը եւ այս է Աստուծոյ երկիւղ բռնաւոր, որ ոտքը եւ ազնուական դժայցում մի է, որ սրդիական է եւ ոչ ծառայական, եւ զոր Իմաստունը Սկիւն Իմաստուն կը համարի:

Եւ արդարեւ առանկ սուրբ եւ ազնուական երկիւղ մի իւր սրտին մէջ կը բող ահծը չը մեղանշեր, եւ ահա ան մեղութիւնն է իմաստութիւնն որ աստուած կը տանի եւ յաւիտենական երանութիւն կը պարգեւէ: Առանկ սիրալիր երկիւղը Աստուծոյ ծառայողը անշուշտ նորա խօսքերը պիտի պահէ եւ նորա հրամանները պիտի կատարէ, եւ ահա Աստուծոյ խօսքերն են որ բղմեղ կարգերուն մեղանշելէ՝ չափ կը գնեն մեր կիրքերուն մեր խոտորած ճանապարհները կը շակեն եւ լոյս կուտան մեր ոտքերուն մեր կեանց ճանապարհին վերայ:

Իւրեք աւուրեմն, ո՛ր որդեակք իմ, Աստուծոյ խօսքերուն եւ նորա սուրբ օրհնույր մէջ երկիւղածութեամբ եւ հնազանդութեամբ կրթուեցէք եւ Մարգարէին հետ շարունակ երգեցէք:

«Բա խօսքերդ իմ սրտիս մէջ միշտ պահեցի, որ քեզի գէժ չը մեղանշեմ:

Բա վիպութիւններդ դ ցոյց տուած ճանապարհովը պիտի զուարճանամ, սմեն տեսակ մեծութեան մէջ զուարճանալու պէս:

Ամեն շար ճանապարհէ եւս կեցոյ, որպէս զի քա խօսքերդ պահեմ:

Բա իզատուիրներդ իմանալով եւ աննոցով օրէնագէտ լինելով բոլոր շարութեան ճանապարհները ատեցի:

Ո՛հ, քա խօսքերդ սրտի անոյշ է իմ բնոյցս, մեղքէն շատ աւելի անոյշ է իմ բերնիս:

Երիտասարդն ինչով պիտի շակէ իւր ճամբան, բայց միայն քա խօսքերդ պահեմ:

Տէր, քա խօսքերդ ճրագ են իմ ոտքերուն եւ լոյս կուտան իմ ճանապարհին:

Ահա այս խօսքերէն եւ ատենց պէս բազմաթիւ վիպութեամբ եւ փորձով իսկ համալուած եմք որ մեր կեանքն ու փրկութիւնը Աստուծոյ խօսքն է, որոց մէջ կը կրթուի երկիւղած մարդը, դուք եւս այս խօսքերուն հոգին զգալով Աստուծոյ պատուիրանաց մէջ կրթուեցէք միշտ, զանոնք գործադրելու համար քննեցէք եւ ձեր խորհրդածութեան նիւթ լրէք եւ տեսէք թէ ձեզ ինչ կը սովորեցնեն:

Աւաքեալը կ'ըսէ. «Ամեն մէկը կը փորձուի իւր ցանկութիւններէն մղուած ի խաբուած, այնուհետեւ ցանկութիւնը յղանալով մեղք կը ծընանի...: Ուստի ամեն ազնուութեան եւ շարութեան մէջ յառաջանալը մէկդի թողէք, ձեր մէջ սերմանաւոր խօսքը հեղութեամբ ընդունեցէք որ կրնայ փրկել ձեր հոգիները, բայց խօսքը կատարողներ եղէք եւ չէ թէ միայն լսողներ: (Յ. Ի. Բ. 14):

«Աստուած իւր խօսքը զրկեց եւ բռն ժշկեց զանոնք ու փրկեց իրենց ապուրանքներէն:»

Մեր, որդեակեր իմ, եթէ երկիւ-
րածութիւն տեսնեամք, եթէ զԱստ
ուած օրհեմք, տեղաշա Աստուծոյ
խօսքերը ստիկելու փայլ կ'ունենանք,
նէ կրպակեմք զսենոյք ամենայն երկիւ-
րածութեամբ որ զմեզ կը փրկեն ամեն
տեսակ մեղքերէ և չարութենէ։ Եթէ
մենք Աստուծոյ խօսքերը չը լսենք չը
ստիկենք ու չը կատարենք, ապառա-
ւապաշտ և ճշմարիտ հաւատացեալ
չեմք սեպուխ, փառն զի օրրոմ չեմք
լինելու, և ահա այն տունէն է որ մենք
կ'անկանինք ամեն տեսակ մեղութեանց
և մեղաց մէջ։ Աստուծոյ կը հաւա-
տամ բոկը միայն հերիք չէ. եթէ
ճշմարիտ է հաւատքդ պէտք է նորա
կամբ կատարես իւր հրամանները
տոյրելով որք կեանք ու երջանկու-
թիւն կուտան։

Մերելն որդեակեր իմ, չէր փառա-
քիր Աստուծոյ որդի և Յիսուսի Քր-
քիստոսի եղբայր տնուանիւ, տանի
մեծ պատուոյ և փառաց ով չը ցան-
կոր, ապանկ շնորհաբոհիկ պատիւ ով
կրնայ շնորհել. միթէ աշխարհի բոլոր
փառքերը, պատիւներն ու իշխանու-
թիւնքը Աստուծոյ որդի և Յիսուսի
եղբայր լինելու ամենաբարձր փառաց
կրնան հաւատարիկ, քան լիցի։ Այլ
ափսոս, որ մարդիկ աշխարհի փոքր և
անցաւոր փառքեր ստանալու համար
ամեն դժուարութիւն կը քաշեն, շատ
անգամ սրտեհառանքի հակառակ նը-
ւաստ եւ անարդ միջոցներու ալ կը
գիմեն. բայց այս մեծ և անկշռելի
փառքն ստանալու համար թեթեւ
ճիգ մի չեն ըներ. Յիսուսի Քրիստոսի
եղբայր, քոյր և մայր ըսուելու համար
փարբիկ աշխատութիւն, քիչ մի նե-
ղութիւն քոշել չեն կամիր։ Բայց
մարդ ինչպէս կարող է արդեօք այս
փեմ պատուոյն և այս մեծ փառաց
արժանանալ։ — Այս հարցման պա-

տասխանը նոյն խոյ մեր Տիգրանէն
պէտք է ընդունինք, որ կ'ըսէ. «Ահա
իմ մարդ ու եղբայրներս սքաւ են, որ
կեցած Աստուծոյ խօսքը կը լսեն ու
կը կատարեն. որովհետեւ Աստուծոյ
կամբ կատարողն է իմ եղբայրս ալ,
քարս ալ մայրս ալ»։ Ահա պարզ և
մեկնութեան կարօն չեղող խօսք մի,
որ բացարձակապէս կը մնայ թէ իւր
խօսքերը պահպանէ միայն իրեն հաւց
կը տեսնէք, ահաւասիկ ձեր ուրիշ
բացմանքները կատարելու չափ գրե-
ութեամբ լինեն չը կոյ այս ամենամեծ
փառաց հասնելու համար, միայն Աս-
տուծոյ խօսքերը լսելու, նոյա մեջ
կրթուելու և զանոնք կատարելու է,
որուն վախճանը եւ պտուղը սցիքան
քաղք, այնքան բերկրական և երջան-
կաւթ է որ ամեն դաւնութիւն կը
քաղցրացնէ եւ գժուարութիւն կը
թեթեւցնէ. փայծալը գիտէ, որ նորա
խօսքերը կատարելը դժուար չէ, ինչ
պէս Սուրբ Բովհաննէս ալ կ'առէ թէ
«Նորա պատուէրները ծանր բաներ
չեն»։

Ամենակարգուն ու ամենակատարն
Աստուած մարդուն այնպիսի կատա-
րելութիւն և զորութիւն տուած է,
որ շատ դժուարին բան կարող է ընել,
օգնութիւն տանալով Նորոգիչ Սուրբ
Հոգիէն, հերիք է որ յօժարութեամբ
կամի։ Բայց նորա անձնիշխան կարո-
ղութեան ու զորութեան փառքն ու
պարծանքը այն տեղն է, որ իւր ու
նարգ, անօգուտ և միատակար յօժա-
րութեան դէմ զինելով և մարտնչե-
լով անոնց յաղթէ, չարէն հեռանայ
և բարւոյն հետեւի. բուն յաղթանա-
կի և պտակի արժանաւորութիւնն ալ
այն տեղ է։ Առանց պատերազմի յաղ-
թիւն չը կայ, և առանց յաղթութեան
փառաց յաղթանակն ընդունիլ անկա-
րելի է։ Մենք ամեն վայրկեան մեր

կիրքերուն եւ յօժարութեանց դէմ պատերազմ ունիմք, անոնց պէտք է յաղթենք ու չէ թէ յաղթուինք. մարմինը և ինչ որ մարմնոյն է, հակառակ են Հոգւոյն. եթէ մեք մեր հոգին առաքինութեամբ եւ բարեպաշտութեամբ հրահանգած և զօրացուցած չը լինիմք, մեր երկրաքարը մարմինը կ'աւնու զայն և իւր հաճոյիցը կը խռնարհեցնէ: Ի՞նչ է մարմնոյ հաճոյքը, մեղք և մեղութիւն, որ թշուառութիւն է Հոգւոյն, և որպէս զի հոգին նորա մէջ չ'անկանի, պէտք է ՚ի մանկութենէ աստուածապաշտութեան և աստուածսիրութեան մէջ կրթուիք, Աստուծոյ սուրբ երկիւղովը և խօքերովը անանիք ու աճիք, փոքրիկութենէ ջանաք որ բնաւ մեղութիւն մի չը գործէք, պէտք է որ դուք ինչ և իցէ անվայել բան մի գործելէ առաջ ստատիկ երկիւղ և ամօթ կրէք. ամօթխածութիւն մեծ զէնք մի է չարութեան գէմ, երբ մարդ զայն գործելէ յառաջ կ'ամաչէ, և այս ամօթխածութեամբ կը փախչի և կը զգուշանայ մեղք ու չարիք գործելէ:

Աստուած ամենատես և ամենագէտ է, ամեն ժամանակ ամեն տեղ ամեն մթութեան խորքերուն մէջ անգամանոր ներկութենէն պէտք է պատկառիմք և իւր հրամաններուն հակառակ բնաւ գործ մի չընենք:

Որդեանիք իմ եթէ զձեզ խաբելով մեղքի յօժարեցնեն, արթուն կեցիք, մի խսրուիք. ստեղծէք ամեն տեսակ չարութենէ և զանոնք ձեզ սովորեցնողներէն հեռացէք: Նորա, ինչ ալ լինին, աստանայի արքանեակներն են, նորա Աստուծոյ հակառակ են: Աստուած ձեր որդին գաղանիքներն ալ գիտէ, Նա ձեր խորհուրդներն ալ պիտի դատէ, ուրեմն Նորա ամենատես աչքէն և ամենագէտ խնայողութեան տալի-

ւէն ո՞ր պիտի կրնաք փախչիլ, որ ծածուկ տեղ պիտի կրնաք պահուիլ որ Նա զձեզ չը տեսնէ ուրեմն ինչո՞ւ կ'առանձնանաք. . . .

Պէտք է գիտնաք որ ամեն գտտարի խօքի համար ալ հաշիւ պիտի պահանջուի, հապտ ո՞ր մնաց այն գործքերը որ յայտնապէս Աստուծոյ սրբութեանը ու բարութեան ներհակ են, ինչպէս են մարմնոյ ցանկութեան կամ հեշտախառութեան գործքերը:

Այս ամենը գիտնալով՝ հիմակուանէ, ձեր մանկութեան օրէն, խիստ փոքր հասակէն սկսեցէք Աստուծոյ երկիւղին մէջ կրթուիլ. անմեղ, սուրբ և աստուածային խորհուրդներով զբաղիլ: Նորա օրէնքներն ու պատուէրները երկիւղածութեամբ ձեր ամեն խորհրդոց, գործոց ու շարժմանց կ'անտրեք, այնպէս որ անոնց հակառակ եղածը թող ձեզ ալ հակառակ լինի, եւ այս ամենուն մէջ պէտք է այժմէն կրթուիք, ապա թէ ոչ վերջէն դժուար կը լինի և մեծ օգուտ մի չընէք. «Յիշէ՛ իմ մարդ, քու Արարիչդ քու մանկութեան օրերուդ մէջ», կրտէ խնայողութիւն, վասն զի երբ այն գեղեցիկ օրերը, այն սիրուն ու զուարթացիլ օրերը առանց Աստուծոյ կամքին անցնէք վերջէն թշուառ օրերուդ մէջ, ծերացած ու տկարացած օրերնուդ մէջ թէպէտ յիշէք, բայց նորա կամքը կատարելու կարող չըլլալով գուցէ օգուտ չունենաք, վասն զի եթէ այն ատեն մանկութեան գործերէ դադրած էք, ձեր կամք չէ, արդէն զգայարաններն ինքնին հոգնած, տկարացած և դադրած կը լինին և այն ատեն քոսմանիդ գուցէ առաքինութիւն չը կարուի, երբ մանկութեան օրերնուդ մէջ յօժարութեամբ եւ երկիւղածութեամբ հեռանալով չարութիւններէ և այնպէս մեծնալով ծերութեան կը հաս-

ներ, յայնժամ ձեր բոլոր գործերը
կամօլին կը համարուին և աստուածա-
հաճոյ են :

Սիրուն որդեակք իմ, եթէ դուք
Աստուծոյ օրէնքներն ու կեանք սրբ-
գեւող խօսքերը այնչափ սիրէք որ այն
ըլլայ ձեր ամենօրեայ խորհրդածու-
թիւնը, եթէ Աստուծոյ պատուիրա-
նայ մէջ կրթուիք, եթէ Աստուծոյ
խօսքերը ընելու և կատարելու քաղա-
րութեան համե առնուք, եթէ սրդի-
տկան սիրով ամենաձեռք անկէ եւ նորա
կամքին հսկառակ չընելու երկիւղա-
ծութիւն կրէք, այն ատեն երանու-
թիւնն ու օրհնութիւնն պիտի ժառան-
գէք: «Երանի այն մարդուն որ Տիրոջ
մէն կը վախնայ. այնպիսին նորա պա-
տուիրանները շատ կը սիրէ: Այնպիս-
ւայն դուստր երկրի վրայ ուժեղ կ'ըլ-
լայ և ուղիղ աղբերու մէջ կ'օրհնուի,
նորա տան մէջ փառք ու մեծութիւն
կայ եւ անոր արդարութիւնը յաւի-
տեանս յաւիտենից կը մնայ »:

Մեղաց զէմ մեծ ղէնք է երկիւղա-
ծութիւնը, որով մեղքի բոլոր հրա-
պուրանքները բացէ 'ի բաց կը մերժէք:

Արդ եթէ դուք Աստուծոյ հայ-
բոսկան սէրը ճանչնաք և սրգիտկան սի-
րով անոր յարիք, շատ անգամ քաղցր
խանդաղտամեօք իրեն գիմելու կարե-
ւորութիւննիդ պիտի դգայք, թէ չը-
նորհակալ լինելու և թէ իւր գթու-
թիւնը շարունակ խնդրելու, և ահա
այս է Աղօթք:

ԱՂՕԹՔԸ աստուածադաշտութեան
եւ երկիւղածութեան հետ մեծ կա-
սրակցութիւն ունի, և մեծ ղէնք է մե-
ղաց փորձութեան դէմ, չը մեղանշ-
լու և մղութիւններէ աղստելու հա-
մար աղօթքը խիստ կարեւոր է. անոր
համար էր որ Յիսուս սրատուիրեց թէ.
«Պէտք է ամեն ժամանակ աղօթքի կե-
նող ու չը ձանձրանալ, ամեն ատեն

աղօթք ըսէք որպէս զի փորձութեան
մէջ չանկանէք »:

Ի այդ պիտի ըսէք թերեւս որ, «Ե-
թէ ամեն ատեն աղօթք ընենք, երբ
գործելու է » . այսպէս ասողները տա-
կաւին աղօթքին բուն նշանակութիւ-
նը չեն գիտեր. հոգալով եւ ճշմարտու-
թեամբ երկրպագութեան ինչ լինելը չեն
հասկոցած. այնպիսիներն լոկ արտա-
քին ձէ երն և սովորական եղանակ-
ները միայն աղօթք կը համարին, ս-
րով և չեն հասկանար յամենայն ժամ
աղօթք ընելու պատուէրին խմստը,
ուստի և անոր օգուտը փայլելէ միշտ
զուրկ կը մնան:

(Շարունակելի)

ԲԵԹՂԵՀԷՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ԽՆԴԻՐ

Արշափ որ Մեծի Ժամանակագրու
կանի մէջ մերթ ընդ մերթ համառօտ
տեղեկութիւններ հրատարակած և մք
Բեթղէ հէմի Ս. Ծննդեան Այրին եւ
Տաճարին խնդրոյն նկատմամբ, բոց
մեր ազգայնոց աւելի ամփոփ և շարա-
յարեալ ծանօթութիւն տալու համար
արժան կը համարիմք, ինչպէս խոստու-
ցած եմք, նոյն խնդրոյ մասին Ս. Ա-
թոռոյ Տնօրէն Ժողովոյ Տեղեկագրի
քաղուածը գնել:

«Բեթղէ հէմի Ս. Ծննդեան Եկե-
ղեցոյն խնդիրը ըստ որում Ս. Տե-
ղեաց խնդրոյն մէջ առաջին տեղին ու-
նի, հետեւաբար Աղգ. մեծ և նախ-
րական իրաւունք մը կոյ սորա մէջ,
և որ իւր մեծութեան համեմատ մե-
ծամեծ դասերու ենթակայ եղած, 'ի
նախնեաց անտի մեծամեծ աշխատու-
թիւններ, մեծամեծ զոհողութիւն եր
եղած են այս մասին ընդ համար Աչ-

գին հողմանէ. մի ծամեծ յաղմանց և վէճերու առթիւ եղած է. Տէրութեան Բարձրագոյն ատեններն երկար ժամանակ զբաղեցուցած է. մէկ խօսքով այս մեծ խնդրոյն վէճը, գաղաղ և զհազութիւններն միշտ գրեթէ շարունակելի են, թէ և երբեմն կը դադարին:

Այս խնդիրը 72 — 73 տարւոյն մէջ կրկին ծագեցաւ. բայց օրով հետեւ աւրաբուն սկզբնածագը 1-69 Մայիս 8ին է. ուստի մանրամասնում տեղեկութիւն մի տալու համար անտի կը ըստ կրտսեր:

167 թ Մայիս 8 գիշերուան ժամը 5ին Բեթղէհէմի Ս. Մննդեան Այրի հարաւային դռնէն հրդեհ սկսելով՝ Լատինաց՝ Այրի մէջ ունեցած դրան վարագոյրը, առատաւայրի և որմերուն վերայ եղած ըսֆէն վարի վարագոյրները, որ երեք ազգաց կը պատկանին, Աւագ Սեղանի, այսինքն Ս. Մննդեան տեղւոյն վարագոյրը, Մեր և Յունաց մի քանի պատկերներ և փոկեր այրեցան և կանթեղներ վար թափեցան:

Հետեւ ալ օրը (Մայիս 9) քաղցրօրէն Կոռափարիչ Նստիքի փառայն, Գաղղիոյ Հիւսրատար, Մեր և Յունաց Ս. Պատրիարքունք գնացին ի Բեթղէհէմ ուր առանց հրկիզութեան սկզբնաւ պատճառը և աղբիւրը սրտնւլա միայն ուրեղէն առաջ երեք ազգաց առանձինն ունեցածը արձանագրեցին. (Թէպէտ և Լատինք այրեղէն վերջը գտնուածներն կը ջանային արձանագրել առ) եւ օրացուեցաւ նոր վարագոյրներ, պատկերներ և կանթեղներ կախել ըստ առաջին քանակութեան եւ սեփհականութեան իւրաքանչիւր ազգաց, բայց Լատինք եւ Գաղղիոյ Հիւսրատար կը պնդէին թէ՛ բայց ի դրան վերայի վարագոյրէն, առատաւայրի և ըսֆէն վարի վարագոյրներն եւս իրենց կը պատկանին. իսկ Մեր և Յոյք

եւս կը պնդէին թէ՛ երեք ազգաց կը պատկանին. այս պատճառաւ առատաւայրի և ըսֆէն վարի վարագոյրներն կախելն յետաձգեցին. իսկ միւսներն, կանթեղներն և պատկերներն կախուեցան, թէ և Լատինք Մեր պատկերաց կախուելուն շատ ընդդիմացան:

Մայիս 21 թ Մեր Եօթն և Յունաց մէկ պատկերներն գողցուեցան, նոյն պէս Ս. Մննդեան տեղւոյն արծաթ թեւոյ առաջանիշ կերտուածի, որ Լատինացն է, մէկ բեւեալը. ուստի պաշտօնական անձինք կրկին Բեթղէհէմ գնացին, և մեք առանց գողը և գողծը որոնելու նոր պատկերները կախել կամեցանք թէպէտ, բայց Լատինք ընդդիմացան առելով մինչեւ առատաւայրի եւ ըսֆէն վարի վարագոյրները իբրեւ Լատինական սեփականութիւն չը նորոգուին, Հայք իրաւունք չունին իրենց պատկերները կախելու. ուստի Ս. Այրը զօրաց պահպանութեան յանձնուեցաւ եւ Բդէճիի Մեր և Յունաց կաղմ Բ. Գուռը հեռագրուեցան. հրաման եկաւ գողցուած պատկերները վերստին կախել, բայց չը գործադրուեցաւ:

Յուն ժողով մէջ Բ. Դրան հրաւանաւ Մեր երկու և Յունաց մէկ պատկերները կախուեցան Ս. Այրի դրան ճակատի վերայ իրենց տեղը. և մնացեալ Մեր հինգ պատկերները կախուելու մասին Կոռափարութեան կողմէն յայտարարութիւն եղաւ թէ՛ այն վէճի տակ եղած վարագոյրներէն ըսֆէն վարինը կախուած ժամանակ պիտի գրուին. և այն վարագոյրներն ալ Տէրութեան կողմէն պիտի վնասին:

1570 Օգոստոս 17 թ Պոլսեցի Բեռն միջփառայն օրով Ս. Յակովբայ իրնդըրոյն համար Բ. Դռնէն յապհապէս բնիշ եկող Միւնիք Էֆենտին եւս յայանկց թէ՛ այն վէճի տակ եղած

վարագործներին ըրաֆէն վարինը Տէ-
րութիւնը պիտի չինէ . ձեր պատկեր-
ներն ալ այն տարէն պիտի կախուին :

1072 Յունիս ամսոյն Ապրապի
Քեամիլ վաշտոյի օրով Ռ . Դրնէն յատ-
կապէս հրամանագիր մի եկած էր ի-
րեն . որոյ մէջ գրուած էր թէ՛ Տէրու-
թեան կողմանէ շինուելիք ըրաֆէն վա-
րի վարագործը շինուելով զգուցեցաւ ,
զայն կը կախէք և միանգամայն Հայոց
չորս և Լատինաց մէկ պատկերները ,
(Կերեւի որ առանց Մեր և Յունաց
գիտութեան գաղտնի Մալպաթս գնա-
ցած է թէ՛ Հայք չորս պատկեր ունին ,
մէկ հատ ալ Լատինք) վրան զի մենք
հինգ պատկեր ունեինք կախուելիք ,
և այն մէկ պատկերը զոր Լատինաց
յատկացուցիր են , մերն է , այն տեղ
Մեր պատկերներու շարքին մէջ բնաւ
պատկեր կախելու տեղ չունին Լա-
տինք :

Յունիս ամսոյն Մարտիս Փաշան
յաջորդելով չորիցս յայտնեց թէ՛ Տէ-
րութեան կողմէն եկած վարագործները
պիտի կախուին , եթէ Հայք և Յոյք
հաճութիւն տան : Տեսնել ու զեցինք
եւ այնպէս մնաց . այս մասին Պո-
լիս Ս . Պատրիարքին գրուած է Յու-
նիս 29 ամսութեամբ : Այնուհետեւ
մինչեւ Յունիս 16 հետզհետէ հան-
գարտութիւն տիրելով՝ կը յուսալինք
որ խնդիրը խաղաղութեամբ կը վեր-
ջանայ . բայց վաթորիկը առաւել
բուռն և սաստիկ կերպիւ յանկարծ
սկսաւ :

Յունիս 16 թիւ 11 նամակով մեր
Տեսուչը տեղեկութիւն տուաւ Մեզ
թէ գիշեր աստէն Ս . Այրի գրան ա-
ռատապի ներքեւի Մեր և Յունաց
պատկերներու տակի վարագործին մեր
պատկերներու տակով մէկ կանգուն
և թգաշտի լայնութեամբ կտրուած է .
և թէ՛ Լատինաց Տեսուչը ժամերգու-

թեան ժամանակ զինքը Ս . Այրի կռ-
ջելով՝ և յոյց տալով նոյն վարագործի
կտրուած տեղը՝ ասած է , մեր լուսա-
րարը ժամը 10ին գալով՝ Յունաց ուի-
ստուոր մը տեսած է այս տեղ . կ'երե-
ւի թէ այն կտրած է : Այս խօսակցու-
թեան վերջը Լատինք վարագործին
ուրիշ կտոր մը յարմարցնելով՝ կտրած
են . այս այն վարագործն է , որ երեք
ազգաց կը պատկանի և վեճի տակ է :
Ահա՛ այս եղաւ ամենամեծ պատճառ
այն չարեաց և կռիւներու՝ որ 29 օր
յետայ Ս . Ծնդեան Այլին մէջ տե-
ղի ունեցան :

Փետրվար 15 ին ժամը 12 ի մօտ
Լատինաց միաբանութիւնը ամբողջ
և 200 ի չափ գիւղացի ֆէլլա-հ Լատինք
ամենքը զինուած Ս . Այրին մէջ եւ
ջըմարտները ընցուելով՝ Ս . Այրի բռ-
լար սրմբաւն վերայ վարագործ կախե-
ցին , վերէն մինչեւ գետին , բաց ի
առաստաղէն . մինչդեռ առաջ միայն
կէս կանգուն էր ի սկզբանէ անտի ,
զայն խրոցներով միայն իրենք կախել
կուղէին . Մեր և Յունաց կողմէն չք
թողարկելով Մեր իրաւունքը յաւիրչ
տակի՛ վեճի տակ մնացած էր : (Եւս
վարագործը իւր նորաձեւ շինուած օշո
համար ոչ վարագործ կտրելի է ասել
և ոչ պատկեր , այլ պատկերավարա-
գործ) : Սորա վերայ անմիջապէս բաղ-
քեցինք Բդեշին Մէք և Յոյք և Բը-
դեշը՝ Նազիֆ փաշան խոտապաւ հե-
տեւեալ օրը ժամը ութին վերցնել :
Բայց ընդհակառակն առաւօտուն ,
քսան զօրք զովեց Ս . Այրը զգուշու-
թեամբ պահպանելու համար : Պայ-
մանաժամը լրացաւ , բայց վարագործ-
ները չը վերցուեցան , այլ միայն Փա-
շան իւր թարգմանի ձեռք լուր զոր-
կեց թէ Գաղղից Հիւպատար մինչեւ
երեկոյ պիտի վերցնէ . երեկոյ եղաւ ,
վարագործները դարձեալ կախուած մը-

նային. Փետրվար 17 ին զօրաց թիւր 15) ի հասաւ, և իբրեւ թէ Բ. Գուռն ալ հեռագրելով միանգամայն յայտնեց թէ երեք ազգաց ուխտաւոր երբեք պիտի չ'իջնէ Ս. Այրք, և ոչ Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Փետրվար 20 ին Փաշան պատճառելով որ Բ. Գրնէն հեռագրին պատասխանը մինչեւ այն օրը ուշացաւ, պատարագերու մասին արգելքը վերացուց. Լատինք սկսեցին պատարագել, բայց Մեր և Յունաց կողմէ պատասխան տրուեցաւ թէ, արգելք դրուեցաւ վարագոյրը կախուելուն վերայ, ուստի արգելքը այն ատեն կը վերնայ՝ երբ վարագոյրն եւս կը վերնայ. քանի որ Լատինաց առանց Տէրութեան հրամանին կախած վարագոյրը չը վերնայ՝ մեր շէնք պատարագեր:

Փետրվար 22 ին Յունաց հետ ընկերութեամբ Բ. Գուռը բողոքեցինք, և միանգամայն Փոխանորդաց 'ի Պօլս, որ Պատրիարքաց ըսեն, որպէս զի Բ. Գրնէն իրաւունք պահանջեն. այս տեղ և մեր Ս. Պատրիարքը Յունաց Պատրիարքի ընկերութեամբ Բդեշխին երթալով՝ բողոքեցին իրաւանց բռնաբարութեան համար:

Փետրվար 23 ին Բդեշխը Մեր և Յունաց Ս. Պատրիարքները իւր մօտ կոչելով՝ Բ. Գրնէն եկած հրամանագիր մի ցոյց կը տայ, որոյ մէջ նշանագրուած էր թէ Գաղղիոյ Դեսպանին հրամանն ըրինք, որ այդ կախուած վարագոյրները 24 ժամէն վերցնել տայ. ուստի դեսպանատունէն տեղւոյդ Հիւպատոսին հրահանգ պիտի արուի 24 ժամէն վարագոյրը վերցնելու համար. և այն մասին Բդեշխն եւս իւր կողմէն յուսադրեց Ս. Պատրիարքները. 24 ժամն անցաւ, վարագոյրները կախուած մնային, ուստի Փետրվար 26 ին կըրկին Մեր և Յունաց կողմանէ հեռա-

գրաւ Բ. Գուռը բողոքուեցաւ և իրաւունք պահանջուեցաւ, և այս առթիւ Լատինաց պատարագելը Փետրվար 27 ին կրկին արգիլուեցաւ. բայց Մարտ 1 ին վերստին հրաման տրուեցաւ:

Մարտ 3 ի ժամը 5 ին դեռ Լատին միաբանութեան բռնութեամբ կախած վարագոյրը վար չէր առնուած, Բդեշխը յատուկ նամակաւ Մեզ եւ Յունաց յայտնեց թէ՝ Բ. Գրնէն հրաման եկած է Լատինաց կախած վարագոյրը վար առնել, և Տէրութեան հաճութեամբ Հայոց չորս և Լատինաց մէկ պատկերն եւս կախել. և այն յատարարութենէն յետոյ Բդեշխը կրպակահանքեր, որ անձամբ կամ փոխանորդաբար ժամը 6 ին 'ի Բեթղէ հեմ ներկայ դանուինք: Մի և նոյն միջոցին Մեր Փոխանորդէն հեռագիր ստացանք թէ Լատինաց կախած վարագոյրը վար պիտի առնուի. ատոյգ էր որ Լատինաց վարագոյրը վար պիտի առնուէր, բայց նոր կախուելիքին ինչպիսի բան լինելը չը գիտէինք. մանաւանդ 'ի Գաղղիա շինուելով՝ անշուշտ Լատինական նշաններ պիտի ունենար. բայց յայտնաւէ Բդեշխն եւս այն նոր կախուելիք վարագոյրի մասին խօսք տուած էր Փետրվար 23 ին, որ ինքն երթայ տեսնայ. և եթէ հին վարագոյրէն տարբեր և կամ մէկ մատնաչափ անգամ աւելի է մեղ, տեղեկութիւն պիտի տայր, և ոչ միայն չը պիտի կախէր, այլ և մեղ հետ պիտի բողոքէր Բ. Գուռը. այս առաջներուն ոչ մին կատարեց, որով ակն յայտնի կ'երեւէր որ այն վարագոյրը Տէրութեան մեղ խօսք ստացած ձեւով չէր շինուած. ուստի ոչ անձամբ և ոչ փոխանորդաբար ներկայացանք, և անմիջապէս թէ՝ 'ի Բեթղէ հեմ Բդեշխին բողոքագիր լղկեցինք և թէ 'ի Բ. Գուռն բողոքց հեռագիր

քաջեցինք : Բզեչխը այն տեղ պատուա-
խանած էր թէ՛ ես Տէրութեան հրա-
մանը պիտի կատարեմ : ուստի և Լա-
տինաց ինքնին կախած վարագոյրը վար
առնելով նոր վարագոյր կախեց , նոյն
պէս մեր չորս պատուիրները՝ լուսորա-
րին իշխանաբար հրամայելով , և Մեր
մնացած մէկ պատուիրին տեղ եւս , որ

Լատինաց իրենց Եկեղեցւոյն մէջն
գէպ 'ի Այրը եղած ստորերկեաց ճու-
նասարհին Ս . Այրի մէջ տնեցած
զրան վերայ է , Լատինաց պատուիր մի
կախեց : Հարկ կը համարիմք , այս իբր
վարագոյրի նկարագրութիւնն ընել :

(Շարունակել) :

ԲԱՆՔ ԱՊԱՇԱԻԱՆԱՅ

(Շարունակութիւն և վերջ , տես թիւ 5 :)

Ժնձր ժահահոտ ժայթքեմ ժանտաբար ,
ժանտազատուհաւ եւ ժամախճառ .
ժանեաց ժպրհին ժառանգեալ ժանգառս ,
ժամանաւորեալ առ ժողովարարս :
Իրաքաջ իշխող ինքնանուանական ,
Իմաստապարգեւ ինքնակամ իշխան .
Ինքնազոր ինքնեակ իմրդ իջեւան ,
Իջջիր 'ի խնդիր իսկ իժակորեանս :
Լսրծեաց լիրբս լոփեղ լեզեոփն ,
Լլկիմ լեզուադարս լալագին լալով .
Լքեալ լքանտոս լիտանօք լիով ,
Լնր լալականիս լռեալդ լուսով :
Խարբող խարձողին խարբալեաց խրխտոս ,
Խաւարաւ խղճի խօթացոյց խոտոս .
Խաչաչարչոր Խոյ խոյսցիր առ խանձս ,
Խաղաղածաւալ խնամեալ խոցոտոս :
Մուղակաւ ծփին ծուփ 'ի ծուփ ծփիմ ,
Օանրաբեռնութեամբ ծիւրելով ծփիմ ,
Օագեալ ծառայիս Օաղիկդ ծոցածին ,
Օաւալումն ծագմանց ծորմանց ծովային :
Կենօք կամակոր կրիւք կուրացեալ ,
Կենդանեաց կռոյն կենակից կացեալ .
Կարտաւետք կենաց կիծտիս կիծեցեալ ,
Կանգնեալ կործանեալս կոչմամբ կենաձայն :
Հաղորդեալ հոգւով հոցիդ հրբաշից ,
Հետեւմ հանապաղ հօրդ համայնից .

Հատիկդ հազար հազիւմ հազոմնիւ ,

Հրաշանորոգիկ հաջիւդ հազելից ,

Չսեմիք ձաղանոր ձաղիկեցայ ձախող ,

Չգտելով ձգեալ ձորացն ձախակոյմն ,

Չեւեռածոնգտիւն ձեռագործիւ ձայնող ,

Չօնելով ձրի ձօն ձիւնապայտող ,

Ղաւարապայծառ զապտեր զօղելցս ,

Ղեկավար զօղուն ուղեւորելցս ,

Ղօղանչեմ զօղանջ առ զամպարալցսդ ,

Ղեկավարութեամբ զօղակս զօրիկեցս ,

Ճողճայիմ ճգամբք ճնիւմ ճգնութեամբ ,

Ճեպիմ ճենճելիմ ճարպաւորութեամբ ,

Ճողպարեան ճնչեալ ճիշդ ճշմարտաբան ,

Ճանտարհակցիւր ի ճոխ ճեմարան ,

Մղորեալ մտօք մեղաց մոլեգին ,

Մահացու մեղօք մեռաց մեղային ,

Մաքրեալ Միածին մաշկըս մարմին ,

Մեղաց մաքրութեամբ մկրտարանին ,

Յօրացեալ յախտս յուսահատաբար ,

Յաւեալ յոգնածուի և յիմարաբար ,

Յաւտենից յոյս Յիսուս յայտարար ,

Յայտնեալ յիս յանկարծ յեղանակ յօժար ,

Նուաղիմ նքթիմ նուաճեալ նեղիմ ,

Նենգոտին նետիւ նոյնաբար նեխիմ ,

Նեղելցս նպատտ նախաօժարիմ ,

Ներեալ նիւթակիս ուլ Նախասկիզբն ,

Շեղեցայ շուայլս շըջըմիմ շիտիմ ,

Շեշտելով շանթիւ շեշտին շողորորթ ,

Շնորհաբաշխ շքեղդ շնորհեալ շնորհք ,

Շորթելով շնորհացս շողակամ շքովդ ,

Ո՛հ ոգեպարտիս ոգեպառ ողբամ ,

Ուռկանաւ որդին ուժանամ ունայն ,

Որնեալ ոճիրս , որով սղջանամ ,

Ուժգնասիրտ ուխտիւ որբս որդիանամ ,

Չօրաց չարաչար չարաբիմ չարաւ ,

Չարախտեան չարեօք և չարահամբաւ ,

Չնչին չքատի չքանամ չուսա ,

Չքայն զարիս չքմեղդ չարչարեալ ,

Պարբիմ պարտաբիմ պարունակ պարտաբ ,

Պառակտիւն պարծի պղծացեալ պարուքն ,

Պաշտպանեալ , պահպան , պատժելոյս պատուք ,

Պարենաւորեալ բանիդ պատուօք ,

Զախճախիմ ջրիս ջհռանիմ ջերմիս ,

Սրհեղեղակուլ ջրմիսիմ ջրալս ,

Սնջեան ջերմագուլթ ջերմ ջրատլայս ,

Սխեկուլ ջախ ջախ ջակոյն ջատագուլ :

Ոռմբ բմբաւորին բմբակոծեաց սիւտս :

Սահնախուով աահիմ աամիկս ,

Սոշտական բաղմիկ բահակցիր ռեկիս ,

Սեռական բուփաւդ ռնտեալ աամկարկս :

Սրտաթուռնդ ստրսիմ սարսափաւ սրայդ ,

Սահիմ սովամահ սուր սակրաւ սրբայդ ,

Սուրբդ Սօրաւուլդ սրտիս ստեղծուածայդ ,

Սաստեպիր սրբիլ սիրով սքանչելոյդ :

Վայ վարակելոյս վետօք վայրաբան ,

Վարանիմ վաղվաղ վայրկենէ վայրկեան ,

Վերաջնչեան , վեհդ , վայիցս վախճան ,

Վերստին վառիլ 'ի վեհիդ վահան :

Տաճան տագնապաւ տատանիմ սվ տէր ,

Տօջորիմ տապաւ տրփանայ տարբեր ,

Տեառնդ տնօրէնութեամբ տարտամն տածեր ,

Տնւր տրտմեցելոյս տխար տիրասէր :

Բաղսրդ Բաբունի Բաղետ ընական ,

Բոտեան բոտինս բախճանալ բամայն ,

Բակերտեան բակերտ բախալիդ բախճան ,

Բամիլ բակերտեալ բախիւդ բամկական :

Յանցիւ ցանցարկուին ցանդ ցնդիմ ցաւովք :

Յանկական ցնորիւք ցայտիմ ցոխանօք :

Յօղ ցօղացնցուղ ցնծացո՛ ցաւոտս ,

Յօղարկեալ ցաւոց ցրտաշունչ ցեխոյս :

Իլւսեցի զայս ողբս մնալ յաւիտեան ,

Իլւծ հիւթականս յայտնեալ պարտապան ,

Իլւն անդր , Լստուանձ , աշխարհաց իշխան ,

Իլւսողս արան թողութեան արժան :

Փափաքիմ փառաց փրկիդ փղձկելոյս ,

Փառաւորեսցես փափաքս փօքուս ,

Փեսայարանիդ փարեւով փառս ,

Փողել փառատորոգք փառաբանութիւնս :

Քաջաղերսութեամբ քոյին ճնողի ,

Քաղցրաձայնական քում քերօլէի ,

Քաւեան ըզբերթողս ո՛ք քարոզելի ,

Քրիտոսն իմ Յիսուս քաւիչդ քնցեղիս :

1872 , Նոյեմ. 15 :

Ի Կէլէպօլէ :

Յակոբ Կ.

Պարիւրեան :

ԱՌ ԶԱՄՈՒՐ ՃԵԱՆ

Զամուրձեան պատուելին Հայրենիքի 183 թուոյն մէջ դատաւականին ի հաստատութիւն 787ին Նիկիոյ մէջ եղած ժողով մի յիշելով ասած էր, որ « Այս ժողովն տիեզերական ժողովոց կարգը իրրեւ եօթներորդ մի յիշուած է մեր Յայրմաւուրքին մէջ » . որոյ առթիւ մէք եւս Փետրուար ամսոյ Սիժն մէջ ասած էինք, որ « Մեր Եկեղեցին բաց ի երեք տիեզերական ժողովներէն . . . ուրիշ տիեզերական ժողով մի չի ճանաչեր » . խօսքերնիս կնքած էինք այսպէս թէ՛ « Պատուելին լաւ կրնէ, եթէ այլոց աչքին չիւզը գիտած ժամանակ իւր աչքին գերանը անտես չ'առնէ » հիմնելով Աւետարանի խօսքին վերայ, « Կէդ ծաւոր նախ հան զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեացիս հանել քզ ճիւղն յականէ եղբօրք » : Մատթ. Ե. 5 . Պատուելին մեզ իբր պատասխան գըրութիւն մի հրատարակած է Հայրենիքի 193 թուոյն մէջ, որոյ պատասխանել թէեւ հարկ չէր . ըստ սրում մեզ պատասխան չէր : Բայց նկատելով որ նա իւր գրութեամբ դարձեալ քանայրած է իւր պաշտած Լէւոնի հաւատարմ Տոմարէն մի քանի փուշեր խորել Ազգին աչաց մէջ, պարտաւորեց մեք պատասխանել :

Պատուելին իւր գրութեան առաջին տողին մէջ նոր տառուղղութիւն չի արած է . փոխանակ Սիժն գրելու Սիժն կը գրեմք եղեր . մեծ գիւտ . արդեօք ինչ կանոնով խմացած է, որ Սիժն տխրի գրուի և ոչ Սիժն . մեք այս մասին մեր Քերականութեան մէջ, որ լեզուի կանոնագիրքն է, կանոն մի չեմք գտած, այլ այսչափ միայն գիտեմք, որ մի նախնիք, օտար լեզուէ առնուած այսօրինակ բառերը, ինչպէս են, Սիժն,

Սիժն, Հոմ⁽¹⁾ ևւ այլն, երբ օտլ չեն գրած ոչ ոք գրած են :

Պատուելին այս մեծ գիւտէն ետեւ շնորհակալ կը լինի, որ մեք իրեն խրատ տուած եմք և յետոյ կը յաւելու « Ներում կը խնդրեմ այդ խրատդ մտիկ չը կրնար ընելու » . որովհետեւ գիտէ եղեր նա իւր աչքին մէջ մտած գերանին ինչ և որո՞ւ ձեռամբ մտած լինելը : Մեք մեր խրատը իրաւ է, որ լսել տալու համար տուինք, բայց ինչ անեմք, որ չէ լրաց . բաւական է, որ մեք մեր նուիրական պարտքը⁽²⁾ կատարեցինք . ուստի անպարտ եմք : Քաջ գիտեմք որ շատ դժուար է կամակոր մէկը իւր շաւղէն յետ դարձնելը : Մանաւանդ որ այս մասին Պատուելին շատ նշանաւոր է, ամեն անգամ, որ մէկու մի հետ հրապարակական խօսքի բըռնուած է, որչափ որ գիմացինը պատճառ և փաստ թափած է, անհետքին եղած է համոզել, թէեւ շատ անգամ ամենեւին ճարահատ ընդունիլ ձեւացուցած է առ երեսս և համոզում ու հաւանութիւն ցուցուցած, բայց ոչ բըռնալ իւր ազգայինս ճանապարհն թողած է :

Պատուելոյն աչքը մտած գերանն է եղեր ըստ իւր յոռաճրերու թեան Առաքելոյն սիւն ևւ հաստատութիւն ճամարտութեան ասածը . Պօղոս սուսքեալը կը գրէ Տիմոթէոսին . « Զայս գրեմ առ քեզ չի ակն ունիմ ի մօտոյ դալ : Ապա թէ յամեցից՝ վի գիտայա

(1) Գոյցէ չը հաւատայ մեր խօսքին, ուստի մի քանի օրինակներ գնեմք այս տեղ . « Աւ Կատանգիանոսի ամենապատիկ յօրինեալ, անուանեալ Նոր Հոմ » . « Եւ ժողովեցան Նիկիոյն և Նիկենայի երկցուք ի Հոմ քաղաքէ » . Խոր . « Եւ ետա Դաւիթ զՍիժն ևւ զամբոց նորոց Բ . Թագ . Ե . 7 » . « Հանել զտապանակ ուխտի Տեսան ի քաղաքէ Դաւիթ » . այս է ի Սիժն . Գ . Թագ . Բ . 1 . և այլն :

(2) Եղեկ . Լ . Գ . 5 .

յես, թէ որպէս պարտ խցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել, որ է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն եւ հասարակութիւն ճշմարտութեան: Արդեօք ինչ հասկացած է նա Առաքելոյն սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան խօսքէն: Եկեղեցին հասկացած է, չեմք կարծեր որ Եկեղեցին մարդոյ աչքը կը մըտնէ, գուցէ ինքը հաստատէ զայս: Բայց խնդիր է թէ, որ Եկեղեցին է աչքը մտածը, անշուշտ եմք, որ Հայաստանեայց Առաքելոսիան Եկեղեցին չէ, վասն զի նորա հաւատը որ մերն ալ է, կամ մեր հաւատը, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատն է, Քաղկէդոնական ժողովոյն հաւատոյ հետ միացնել կ'ուզէ. սակայն այդ իրեն գործը չէ. «Քանզի հիմունք նորա հաստատութեամբ եղեալ են 'ի վերայ վիմին անշարժութեան, որ ո՛չ 'ի վերայ երկրի, այլ 'ի վեր յերկինս, ուր ո՛չ անձրեւք իջանեն եւ ո՛չ հողմ շնչեն եւ ո՛չ հեղեղս յարուցանեն»: ո՛չ միայն իրեն գործը չէ, այլ իրեն ամենամեծ գլխուն եւս գործը չէ. զի իրմէ շատ դարերով առաջ շատ Պապեր այդ երազք երազելին, բայց ո՛չ երբեք հասան իրենց անտի-քրիստոնէական նշարատիկին: Ուրեմն մեր Վերապատուելոյն աչքը մտած գերանը ո՛չ թէ «Պրախոսին կենապեր ծառոյն մէկ ծիւղն է, այլ Վատիկանի հաստ գերաններէն մին, կամ Անդրադեոնականութիւնը իւր Լեւոնի տոմարով մէկ տեղ, որոյ ծիւղերէն կը քանայ մեր Եկեղեցւոյ անարատ անգաստանին մէջ անկել, սակայն կը ցաւիմք, որ այսչափ երկար տարիներու փորձէն չը խրատուեցաւ, որ մեր Եկեղեցւոյ անգաստանին հողը, այնպիսի հող մի է, որ նորամուտ եւ օտար անկերը չ'աճնցնէր:

Չամուրձեան վերապատուելին իւր աչքին մէջ մտած գերանին ինչ լինելը

բացատրելն յետոյ իրրեւ թէ կ'անցնի բուն խնդրոյն. բուն խնդիրն է թէ՛ «Մեր Եկեղեցին բաց 'ի երեք պէլլերական ժողովներէ, . . . ուրիշ տիեզերական ժողով մի կը ճանաչէր, եւ ո՛չ թէ ըստ Պատուելոյն է. տիեզերական ժողով մի, այլ ԸՐՐՐԴ մի խի չընդունելու համար այնչափ զոհեր տուած է Յունական եւ Լատինական մղեռանդն հետամուտութեանց, Պատուելին հեղնական եղանակաւ մի կ'առէ, «Հայոց Եկեղեցին երեք ժողովէն զատ ժողովք չընդունիր»: ՏԻՋՁԵՐԱԿԱՆ բառը նորա Լեւոնի տոմարով խափանուած տեսութենէն վրիպած կ'երեւի: Մէք գիտէինք, որ Հայոց (Մեր) Եկեղեցին իրեն եկեղեցին չէ, ինչպէս իւր խօսքէն եւս կ'երեւի: «Մեր եկեղեցին երեք (տիեզերական) ժողովէն զատ ուրիշ ժողով չընդունիր»: Բայց ինչ կ'ասեմք. մեր Եկեղեցւոյ մէջ կարդացուած Յայսմաւուրքին մէջ այսպիսի խօսք մի կայ եղեր. «Տօն է է. ժողովոյն, որ 'ի Նիկիա. կամ 'ի սմին աւուր եղեւ Եօթնէրորդ արք. ժողովն 'ի միւսանդամ 'ի Նիկիա Բիւթանացւոյ, զոր մէք լսելու համար կամ եկեղեցի չեմք երթար եղեր եւ կամ մեր ականջը չիւղ մը մտած է եղեր: Իրաւունք ունի, մեր ականջը չիւղ մի մտած է եւ այդ չիւղը մեր Եկեղեցւոյ անարատ գաւանդութիւնն է, եւ այն պատճառաւ մտած է, որ մեր Եկեղեցւոյ դէմ Վերապատուելոյն բռած բաճաղանաց տէս այլոց բաճաղանաց չըլլանք. այդ կենապեր չիւղը մտած է, ոչ միայն մեր տիանջը, այլ մեր սրտին մէջ եւս հաստարմատ հաստատուած է, որոյ նուիրական տատրէն 'ի պատահել հարկին կարող եմք ազդութեան գաւազան կամ խարազան չինել եւ մեր Եկեղեցւոյ սուրբ տաճարը չ'աճուրձուութեան տեղի չ'ունենան:

կամ յուզդա թիւն ածել եւ կամ իս,
պառ պրտաբան :

Սակաւն չմանցանք թէ Յայրմաւութ
քի խօսքով ինչ ասել կ'ուզէ Պատուե-
լին . մեր խնդիրն է Հայաստաննայց եւ
կեղեցւոյ համար եւ . տիեզերական ժու-
ղով չը լինելը . ինչպէս որ իւր բերած
խօսքին մէջ եւս տիեզերական խօսք չը
կայ . բայց նա կը պառայ , որ տիեզերա-
կան ինքը չ'է կոչողը , այլ Յայրմաւութ
քը : Հարկաւ մինչեւ հիմա հասկա-
ցաւ , որ իրմէ զատ ուրիշ մը չը կայ
նոյն ժողովը տիեզերական կոչող . եւ
պիտի ցուցնեմք , թէ ինչ է Տէրու
յենց Չամուրժիին նպատակը : Բայց
անկէ առաջ այս կ'ուզեմք հասկանալ
վերապատուելի Չամուրժի . որ հոգին
սուաւ քեզ այն յայտնութիւնը , որ մէք
սուրբ ասելով միայն երեք տիեզերա-
կան ժողովներն կ'իմանամք . ո՞վ ասաց
թէ մէք Առաքելական ժողովներն սուրբ
չեմք ճանաչեր . կը կասկածիմք , որ մի
գուցէ այդ յայտնութիւնը Հասկանալ
գուշակ Սիոգիւղայններէն ընդունած լինիս
Չիմացանք թէ ինչ նոր արամաբանութեամբ
կը հետեւցնեն , որ մէք եթէ
Նիկիոյ երկրորդ ժողովը առաջ չընդու-
նիմք , մէք Ազգ . ժողովներն եւս , ինչ
պէս են Ս . Սահակայ , Աշտիշատու ,
Դունայ , Մանաղիկերտի եւ այլ ժողով-
ներն սուրբ չեն լինիր . քեզ ո՞վ ասաց ,
որ մեր ժողովներու սրբութիւնը այլ
սողգաց ժողովներու սրբութենէն , կամ
անսրբութենէն կ'ախուժն ունի . այդ
մոլեկրօնութեանց գործն է , որ իրմէ
գուրս սրբութիւն չընդունիր եւ մինչեւ
անգամ Աստուծոյ շնորհքը այլոյ կը
զանայ . բայց նա ուր կամի շնչէ :

Ո՛չ , Վերապատուելի , ո՛չ , մեզ հա-
մար վերն յիշուած Ազգ . ժողովներն
սուրբ են եւ ամենասուրբ . մեր սիրտը
օտարամոլութեամբ չէ տապկանած եւ
սչ աչբերնիս կուրացած , որ չը տես

նեմք , չը զգամք եւ չ'իմանամք թէ՛ այն
ժողովներն ո՛չ թէ միայն մեր Ազգին ,
այլ Քրիստոնէութեան նկատմամբ ինչ
մեծ նշանակութիւն ունին . մէք կըզ-
գամք եւ կ'իմանամք այդ ամենը , եւ եւ
թէ կամակորութիւնը թողով կամե-
նաս ուտանիլ , ուրախութեամբ կ'ու-
սուցանեմք եւս :

Հայաստանէն Քրիստոնէութիւնը
խաբառ ջնջելու համար ՚ի Հայաստան
գնացող Պարսիկ մոպերուն պէս , որոնք
ամենեւեմ տնիսական իրենց ձեռնոր-
կի յաջողութեան վերայ խորհուրդութեամբ
կը վաղվաղէին , վիճակ կը ձգէին ճու-
նապարհին եւ փայտ կընկենուին , թէ՛
որ լեզու , կամ որ ազգ , որո՞ւ վարդա-
պետութեանը պիտի աշակերտի . մեր
Վերապատուելին եւս իւր նպատակին
մէջ իրբեւ յաջողած եւ մեզ Նիկիոյ երկ-
րորդ ժողովը իրբեւ տիեզերական ըն-
դունել տուածի մը պէս ուրախութե-
նէն կը պօռայ , թէ՛ Քաղկեդոնի ժու-
ղովն ալ իրբեւ տիեզերական պիտի
ընդունիս : Արդէս զի մէք յետ չը
գտունամք , իւր հաւատոյն պէս խաբ-
խաբ պատ մը եւս կը քաշէ մեր առ-
ջեւ . իրբեւ թէ՛ եթէ Քաղկեդոնի ժու-
ղովն տիեզերականութիւնը չընդու-
նիմք , պետք է ասեմք , որ մեր Նիկեո-
ցին Յայրմաւութքով ժողովորդը կը
մոլորեցնէ : Եթէ այս պատէն եւս չը
կորոզանամք անցնիլ , պիտի ստիպուիմք
Յայրմաւութքը սրբագրել . բայց (այդ
իշխանութիւնը եւ իրաւունքը չունիմք
եղեր) , ինչ է սրբագրելնիս . —
Մէք եւս չը գիտեմք : Պատուելի , լաւ
կ'ասես , որ իրաւունք չունիմք Յայր-
մաւութքը սրբագրելու , որ շատ ան-
գամ սրբագրուած է եւ եթէ այսօր եւս
հարկ տեսնուի , կարելի է սրբագրել .
բայց դու որով իրաւամբ եւ իշխանու-
թեամբ սրբագրած եւ փեղեղեանքս
սը ներմուծելով , եթէ մէք Յայրմա-

ւութիւնը սրբազան իրաւունքը չունիմք, քեզի միայն իրաւունքը և իշխանութիւնը տուաւ, որ ուրանալով մեր Եկեղեցւոյ հաւատը, կամ դաւանութիւնը և վարդապետութիւնը՝ Լեւոնի տամարին փշերը Ազգին մէջ ցանեաւ. ոմ տուաւ այդ իշխանութիւնը որ ուրանալով Ազգ. այնքան սուրբ ժողովներն, մեր Եկեղեցւոյ շատ մը սրբազան Հայրապետաց վճիռներն, մեր եկեղեցական պատմութիւնը, մէկ խօսքով ուրանալով Ազգի և Եկեղեցիի՝ Ազգին աչքին Քաղկեդոնի թեման վրէժն փչեաւ: Մեր Եկեղեցին մերժելով մեր ժամ է ընդ միշտ Քաղկեդոնի ժողովն և քոյ հռչակած Լեւոնի տամարն. այս մասին յոյսդ կտրելով՝ ձայնդ քաշէ:

Բայց դու պիտի հարցնես, ինչպէս որ հարցուցած ես, «Քաղկեդոնի ժողովին մոլորութիւնն ի՞նչ է... քու հաւատքդ նորա հաւատքէն ինչով կը տարբերի?»: ասկաւին այս հարցմանդ չը պատասխանած կուզեմք իմանալ, թէ ի՞նչ է նպատակդ որ այս տեղ Կ. Վ. Շահնազարեանի գերեզմանն ալ բրբրած ես, արդեօք մոռցած ես այն դպրութիւնը զէպրը, որոյ դու առիթ տուած ես յիշեալին 51 թուին Պօլիս եկած միջոցին: Հոգ չէ, եթէ մոռցած ես մէք կը յիշեմք:

Կ. Վարդապետին Պօլիս գալէն «Քանի մը շաքաթ անցնելէն ետեւ, որ մը Եդեսեան Յ. Եպիսկոպոսը, որ քաջածանօթ էր Ս. Աթոռին (Էջմիածնայ) և Վարդան Վարդապետը՝ որ բնիկ Էջմիածնէն ըլլալով այն օրերը Պօլիս էր... կը հրաւիրեն զԿ. Վ. յիւսկիւտար ՚ի տուն Նիղամեան Պատրիարքայի, որ մօր եղբայր էր Յ. Ե. ին, սւր մէկ գիշեր տեսութեան պատճառաւ գալով՝ հոն եկան նաեւ Գրիգոր Պ. Վանանդեանց և Զ. Պատուելին (կարծեմ դու լինելու ես), այն տեղ

խօսակցութեան մէջ կը պատահի, որ պատկերապաշտութիւնը Հայոց Եկեղեցին երբ մտած լինելուն վերայ խօսք բացուի առանց հակառակութեան: Հետեւեալ օրը այս բանիս վերայ դադունի թուղթ կը գրէ Զ. Պ. առ Յովհաննէս Վ. Ղուղղունճուխի այս խնայտով. «Կ. Վ. ին հետ տեսութիւն ընելով անհաւատութեան նշաններ տեսայ անոր վերայ, և բերանն հոտած ըլլալուն սրտին վերքը կը գուշակուի, կը կարծեմ, որ Վիլիկիս Եպիսկոպոս ըլլալու կ'երթայ, և Պօլիս Պատրիարք ըլլալու խորհուրդ ունենայ և այլն»:

«Յիշեալ Յ. Վ. ը այս թուղթը հրատարակելով և կորդալով առաջի բարեպաշտ և պարզամիտ յարգեղացի վատահամբաւած է զԿ. Վ. թէ նա լրայ հակառակող Հայոց Եկեղեցւոյն. այս համբաւը տարածելով՝ երբ կը ըսէ Կ. Վ. իսկոյն իւր բողոքանայ դըմն Սրբազանէն (Պատրիարք) կը խրնդրէ ատեան դատատանի. որպէս զի իւր դատախազներուն ներկայութեան քննուի և իւր յանցաւորութիւնը և անմեղութիւնը վճռով ատենին հրատարակուի»:

Քեզ թողով այս մասին եղած ժողովոյ ամբողջ արձանագրութիւնը, զոր եթէ ուզես, անշուշտ կարող ես գրուել Ազգ. Պատրիարքարանի Բիւանին և գուցէ քոյ հաւատաքննական գրագարանիդ մէջ. միայն վճիռը կը գրենեմք հոս:

«Ժողովն այս երկար բանախօսութիւնը (անշուշտ արձանագրութեան համար կ'առէ) լսելէն յետոյ, իւր դիտողութիւնը յայտնեց, որ իրաւամբ Կ. Վ. իւր համոզել խօսքերովն արդարացեալ է և Զ. Պ. իւր անեղծ խօսքերովն պարտաւորեալ է, մանաւանդ անպատշաճ գրութիւն (անխիղճ զրուպարտութիւն) ընելով. ուստի ժողովը

պատուիրեց և յորդորեց զՍ. Պ. որ իւր գիրը յետ առնէ և ուր որ խօսեր է անոր պատուոյն գէմ, ինքնին մաքրէ անոր անունը . . . :

“Ժողովը իւր ստորագրութեամբ արդարապէս կը հրատարակէ թէ՛ Կ. Վ. Աղլին եւ Եկեղեցւոյ օրինաւոր, հաւատարիմ, կրօնասէր և մանաւանդ գիտնական վարդապետներէն մէկն է և զրպարտութեան հանգիպած . ուստի Ազգք բնաւ մէկ կասկած ընելու պատճառ չունի ” :

21 Փետ. 1851

Նի Պատ՛. Հայոց

Մի գուցէ այս արդար վճիռը լինի պատճառ Վերապատուելոյն անհաշտ ատելութեան եւ վատ քննախնդրութեան, որ Նի կենդանութեան զԿ. Վ. հաւատաքննական խարաղանով այնքան զրպարտելէն և հալածելէն վերջը, այժմ գերեզմանին մէջ եւս հանգիտտ չը թողուր : Կը յուսամք որ այն վճիռն կրկին անգամ կարդալով իւր սրեղարդ հասակին մէջ խիղճը մէկէն կը լուսաւորուի և որով կը խոստովանի, որ Կ. Վ. այնչտի հաւատարիմ էր և հնազանդ Հայոց Աղլին և Եկեղեցւոյ, որչափ ինքը հաւատարիմ է Պապին և նորա Եկեղեցւոյն :

Գալով Վերապատուելոյն մեզ ըրած հարցման, կ'ասեմք, որ ինքը իրեն Գաղիկեդոնիկ մը բնաւ իրաւունք չունի մեր Եկեղեցւոյ դաւանութիւնը պահանջելու . իսկ եթէ ըսէ, թէ իրեն Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակ կ'ուզղեմ հարցումն, այն ժամանակ կը յայտնեմք, որ մինչեւ Լեւոնի տամարը և Վատիկանի գերանը աչքէն կը հանէ, չը տխուր կարողանայ տեսնել այն տարբերութիւնը, որ մեր Եկեղեցին ունի համեմատութեամբ Հռովմէական Եկեղեցւոյն :

Գիտեմք հաւատաւաւ, որ այս ա-

մեն ըսուածներն աղղկյութիւն մի չը տխուր առնեն Չամուրձն անի վերայ, և նորա բնաւորութիւնը կրնա խառնալով այսքան ևս չը տխուր խօսելինք, եթէ ուղղակի մեզ պատասխանած լինէր, այսինքն կամ ուղղակի յետ առնէր իւր խօսքը Նիկիոյ Բ. Ժողովոյն տիեզերական ասուլու մասին և կամ հաստատէր, որ մեր Եկեղեցին ընդունած է զայն իբրեւ տիեզերական : Բայց Չամուրձին կը զեջանի ուղղակի պատասխան տալ, քանի որ իւր գլխաւոր նպատակն է, Նիկիոյ Բ. Ժողովոյն տիեզերական ինքնահնար անուն տալով՝ Գաղիկեդոնի ժողովոյն տիեզերականութիւնը վաւերացնել Նիպատիւ անդրաբնական պաշտաման իւրոյ և Նիպատիւ Հռովմէական Եկեղեցւոյ, որում կամակատար և անձնուէր ծառայ կը հանգիստանայ յորէ անտիմաներմական դաշնակցութեան ընդ պաշտօնակատարին Թեղուիթաց, ըստ իրեն իրօնասէր եւ հայասէր Էսովէն — Պօրէի :

Ս Տ Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Մարդկան ազգի մէջ շատ միութիւններ կան որոս բառնալու համար պէտք է միահաղոյն աշխատին Եկեղեցականք, Ուսուցիչք, Գատիարակք, Տէրութիւնք, ծնողք, մէկ խօքով բովանդակ մարդկային ընկերութիւնը :

Պէտք էր ամեն որ միաբանէր վերջնելու և հալածական ընելու մարդկութեան մէջէն այս մարդկային կենաց, պատուոյ, ընկոյց և բարուց ու խերիմ թշնամի սղանդակ հրեշնէրը ինչպէս ևն, զեղխութիւն, չուայտու :

Թիւն , արբեցութիւն , հեշտախոտութիւն , գողութիւն , սպաննութիւն , ստախոսութիւն և այլն որք մահ են ուղիղ բարոյականութեան և թշնամի երջանկութեան մարդկան . մանաւանդ ստախոսութիւնը :

Ստախոսութիւնը այն ամենաշար տխուրէն մէկն է , որոյ հետ կապուած են գրեթէ ամեն տեսակ չարիք : Այս տխուր ստատանայէն ծնաւ . և նոյն ինքն սուտ խօսողն է այլ ոմն սատանայ :

Ստախոսութիւնը խռովութիւն կը սերմանէ . սիրոյ և բարեկամութեան թշնամի է , ամեն չարութիւն , գողութիւն , սպանութիւն , շնութիւն , պուրնկութիւն և այլն գործել կ'ուտայ իւր պատրուակներուն վստահանալով . բոլոր վերջապէս կը խայտառակուի եւ կը հալածուի :

Ստախոսութիւնն ընկերութեան շահուն և օգտին թշնամի է . վասն զի եղածը չեղած և չեղածն ալ եղած ներկայացնելով մտքերը կը շփոթէ , ուղիղ դատողութիւնը կը խանգարէ , ճշմարտութիւնը թիւրեւթով սխալ խորհել և գործել կ'ուտայ 'ի վնաս բազմաց : Սրտախօսը իւր բանականութեան , խելք ճին և գիտակցութեան դէմ մեղանշելով մարդկային վստմութեան դէմ կը գործէ , ցած , նուաստ և ապականեալ սրտի ու մտքի աէր կըլլայ . ուստի եւ անարժան է մարդկային ընկերութեան մէջ ապրելու . անարժան է մարդ կուշուելու անգամ , քանզի մարդկութեան կոշումն ալ ուրացած է , որ է ճշմարտասիրութիւն :

Ստախօսն է որ ընտանիք կը վրդովէ . ստախօսն է որ բարեկամներն ի բարու ատելի և թշնամի ընելով իրարմէ կը բաժնէ . ստախօսն է որ աղգներն աւ ժողովուրդը կը յուզէ կը շփոթէ ի տարու դէմ կը զինէ եւ չը թողուր որ իսկ գործեր և աղգ աշխու թիւնը յա-

ռաջանան . թշնամի է բարութեան և շատ տնդամ տապալիչ իսկ է գահերու և պետութեանց :

Ստախօսը մարդկան առջեւ յաջողութեան ճանապարհը խոտորելով և կորստեան ճանբոյ ցոյց տալով վնասուց խորթորաւոր կը ձգէ և չարաչար կը մնասէ . աղքատին պարէնը կը յափըշտակէ մեծամեծը խոտանալով , կամ զանազան յուսալիր խաբէութիւն դուր և անօգուտ ծախսեր ընել կ'ուտայ : Ստախօսութիւնը հակառակ լինելով բարւոյն և ճշմարտին՝ թշնամի է Աստուծոյ :

Այոքան , և դեռ եւս ասկէ շատ աւելի չարիք բովանդակող ստախօսութիւնը մինչդեռ պէտք չէր բնաւ մարդկան մէջ երեւէր , սակայն դժբաղդաբար ոչ միայն կայ եւ շատ կայ . այլ նաեւ պաշտպան և ջատագովներ ալ ունի . չէ թէ միայն հասարակ մարդիկներէ այլ և վստահութեան արժանի սեպուածներէ , կրօնաւորներէ , ուսուցիչներէ իշխաններէ և բարձրագահ վեհապետներէ :

Սորա այսպէս լինելը մեծ դժբաղդութիւն է աշխարհի , և յետին ստորիճան անարգութիւն ու թշուառութիւն է մարդկան աղգի :

Վայ անոր , որ անգամ մի թողտուած է իւր անձին կամ ինքն իրեն ներած է որ սուտ խօսի . սուաւել ևս վայ անոր , որ ստախօսի մը հետ գործ կամ յարաբերութիւն կուեննայ :

Երբ մէկը թող կուտայ անձին որմանր կամ անվնաս համարուած սուտեր խօսի , թէպէտ իրօք անվնաս սուտ չը կայ . սուան ինքնին վնասէ . այնպիսին որ յաւուր կը յառաջանայ և մեծամեծ ու խիստ վնաստիրար սուտեր ալ խօսելու կը ժպրհի անխիղճ և անաւճժ , որ շատ անգամ այլոց վնասուն հետ ինքն ալ չարաչար կը վնասի . սղորմել

ւոյն անդդամութիւնը մինչեւ այն առ-
տինձան կը հասնի որ իւր մէկ յուսա-
ցած չնչին աննշան օգտին համար բաղ-
մանց օգուտը կը զոհէ եւ կը համարի
թէ լուր ըրտու, ասկայն իւր հանապազ-
օրեայ թշուառութիւնը կը վերջէ որ
արգարութիւնը նորա չարեայ հա-
տուցումն ընելու համար ճշմարտու-
թեան վրիժառու սրովը շարունակ նո-
րա օգուտն ու պատիւը, փառքն ու
խաղաղութիւնը քանցելու ջարդելու
և ողնչացնելու վրայ է :

Ո՛հ, որչափ ցանկալի էր որ աշխար-
հիս մէջ չը գտնուէին երբէք ո՛չ ստա-
խօս, ո՛չ կեղծաւոր շղորդութեան և ոչ
չորահնար խաբեբայներ : յայնժամ
աշխարհ կը խաղաղէր ամեն տեսակ
վրդովմունքէ : քանզի մոլոթ թեանց մեծ
մասը պակտած պիտի լինէր, քանզի
ճշմարտութեան կամ բնաւ վնասակար
բան չընէր, կամ թէ դիպուածով ու
սխալմամբ ընէ ալ շուտով կը զգոյ և
ուրիշ անգամ սաստիկ կը զգուշանայ :

Նոր տեսակ ստախօս խաբեբայի մը
օրինակ դնենք այս տեղ :

Անոցս մէջ Զունկուլայի Յակովբ ա-
նուն կախաղ անձ մի եկաւ այս տեղ և
լուր տուաւ որ՝ Քառասուն հազի ուխ-
տաւոր կուգան, նորա կէս ճանապարհ-
հին վերայ հանգստանալու համար
գաղթեցան ևս միայն աճապարեցի ե-

կայ լուր տալու : Պատմեց նաեւ
թէ փաթառն օրի չտի կայ որ ճանքայ
եղած են և ձմեռան սոստկութեան առ-
թիւ մեծամեծ նեղութիւններ կրած
և կորսւածներու հանդիպած են : Մին-
չեւ իսկ Ս. Պատրիարք Հօր ներկայու-
թեան խօսեցաւ այս ամենը առանց
խղճելու : Միաբանութիւնը ցաւօք
սրտի լսեց եւ կարեկցելով փութաց
պատրաստութիւններ տեսնել որպէս
զի եկողները հանգստանան :

Երբ բաւական ուշացան, համա-
րելով թէ երեկոյն կ'ուգան, յատուկ
քառասուն հոգւոյ համար կերակուր
եւս պատրաստուեցաւ : Քայց ժամա-
նակն անցաւ, եկող չը կար, այս խաբե-
բան ալ արդէն ետիկողուան դէմ թե-
ւը նշան ընել տալով կծկիլը դրած էր :
Վերջապէս մինչեւ գիշեր տախալին
կրսպատուէր որ պիտի գան, բայց մինչ
ցարդ չիք սք, չիք ուրիք :

Հիմա միայն սա չեմք գիտեր թէ
արդեօք այդ ստախօսը վաղեքին այս-
չափ որոմաշուք, հոգ, մտտաւնջու-
թիւն պատճառելով եւ ասանկ նեղ
ժամանակ ունայն տեղը այսբան ծախք
ընել տալովը ինքն ինչ շահեցաւ, միթէ
դիւական պարճանքն ու խնդութիւնը
չա՛հ պիտի համարի : ամօթ մարդ-
կութեան որ իւր մէջ այսպիսի անգա-
մներ կը սնուցանէ :